

Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկ

Համաձայնագրի հոդվածներ

Այն երկրները, որոնց անունից ստորագրվել է սույն համաձայնագիրը, համաձայնեցին հետևյալի մասին.

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ տարածաշրջանային համագործակցության կարելիությունն Ասիայում տնտեսությունների աճը պահպանելու եւ տնտեսական ու սոցիալական զարգացումը խթանելու եւ դրանով իսկ հնարավոր ֆինանսական ճգնաժամերին ու գլոբալիզացիայի համատեքստում մյուս արտաքին ցնցումներին տարածաշրջանային դիմակայությանը նպաստելու հարցում,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ենթակառուցվածքների զարգացման կարելիությունը տարածաշրջանային փոխկապակցվածությունն ընդլայնելու եւ տարածաշրջանային ինտեգրումը բարելավելու եւ դրանով իսկ տնտեսական աճը խթանելու ու Ասիայի ժողովուրդների համար սոցիալական զարգացումը պահպանելու, ինչպես նաեւ գլոբալ տնտեսական դինամիկային նպաստելու հարցում,

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ, որ Ասիայում ենթակառուցվածքների զարգացումը ֆինանսավորելու զգալի երկարատեւ կարիքն առավել արդյունավետորեն կբավարարվի գոյություն ունեցող՝ զարգացման բազմակողմ բանկերի եւ Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի (այսուհետ՝ Բանկ) միջեւ գործընկերության միջոցով,

ՀԱՄՈՋՎԱԾ ԼԻՆԵԼՈՎ, որ Բանկի հիմնադրումը՝ որպես ենթակառուցվածքների զարգացման վրա կենտրոնացած բազմակողմանի ֆինանսական հաստատություն, կօգնի մոբիլիզացնելու խիստ անհրաժեշտ լրացուցիչ ռեսուրսները՝ Ասիայի ներսից ու դրսից, եւ վերացնել Ասիայում առանձին տնտեսությունների առջեւ ծառացած՝ ֆինանսավորման հետ կապված դժվարությունները, ինչպես նաեւ դրանով կհամալրվեն գոյություն ունեցող զարգացման բազմակողմ բանկերը՝ խթանելով կայուն եւ հաստատուն աճն Ասիայում,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ հիմնադրել Բանկը, որը գործելու է հետևյալին համապատասխան.

Գլուխ I

ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 1. Նպատակը

1. Բանկի նպատակն է՝ i) խթանել կայուն տնտեսական զարգացումը, ստեղծել նյութական արժեք եւ բարելավել Ասիայում ենթակառուցվածքների փոխկապակցվածությունը՝ ներդրումներ կատարելով ենթակառուցվածքներում եւ այլ արտադրական ճյուղերում, եւ ii) խթանել տարածաշրջանային համագործակցությունը եւ գործընկերությունը զարգացման մարտահրավերներին դիմակայելու հարցում՝ սերտորեն համագործակցելով զարգացման բազմակողմանի եւ երկկողմանի այլ հաստատությունների հետ:

2. Սույն համաձայնագրում «Ասիա» եւ «տարածաշրջան» հասկացություններին հղումները ներառում են Միավորված ազգերի կազմակերպության կողմից որպես Ասիա եւ Օվկիանիա դասակարգված աշխարհագրական տարածաշրջանները եւ կառուցվածքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կառավարիչների խորհրդի կողմից այլ բան է որոշվում:

Հոդված 2. Գործառույթները

Բանկն իր նպատակն իրագործելու համար ունի հետեւյալ գործառույթները.

- i) խթանել տարածաշրջանում պետական եւ մասնավոր կապիտալի ներդրումը զարգացման նպատակով, մասնավորապես՝ ենթակառուցվածքների եւ այլ արտադրական ճյուղերի զարգացման համար,
- ii) օգտագործել իր տրամադրության տակ եղած ռեսուրսները՝ տարածաշրջանում այդպիսի զարգացումը ֆինանսավորելու համար, ներառյալ՝ այն նախագծերն ու ծրագրերը, որոնք առավել արդյունավետորեն կնպաստեն ամբողջ տարածաշրջանի ներդաշնակ

տնտեսական աճին՝ հատկապես հաշվի առնելով տարածաշրջանի պակաս զարգացած անդամների կարիքները,

- iii) քաջալերել մասնավոր ներդրումները տարածաշրջանի տնտեսական զարգացմանը նպաստող նախագծերում, ձեռնարկություններում եւ գործունեության մեջ, մասնավորապես՝ ենթակառուցվածքներում եւ այլ արտադրական ճյուղերում, եւ լրացնել մասնավոր ներդրումներն այն դեպքում, երբ մասնավոր կապիտալը ողջամիտ պայմաններով հասանելի չէ, եւ
- iv) իրականացնել այնպիսի այլ գործողություններ եւ մատուցել այնպիսի այլ ծառայություններ, որոնք կնպաստեն նշված գործառույթների կատարմանը:

Հոդված 3. Անդամակցությունը

1. Բանկին անդամակցությունը բաց է Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի կամ Ասիական զարգացման բանկի անդամների համար:

- ա) Տարածաշրջանային անդամներն Ա հավելվածի Ա մասում թվարկված անդամներն են եւ 1-ին հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան՝ Ասիայի տարածաշրջանում ներառված մյուս անդամները: Մյուս բոլոր անդամները ոչ տարածաշրջանային անդամներ են:
- բ) Հիմնադիր անդամներն Ա հավելվածում թվարկված այն անդամներն են, որոնք 57-րդ հոդվածով սահմանված օրը կամ մինչեւ այդ օրը ստորագրել են սույն համաձայնագիրը եւ մինչեւ 58-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված վերջնաժամկետը կատարել են անդամակցության համար նախատեսված մյուս բոլոր պայմանները:

2. Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի կամ Ասիական զարգացման բանկի այն անդամները, որոնք 58-րդ հոդվածին համապատասխան չեն դառնում անդամներ, Բանկի կողմից սահմանված պայմաններով կարող են

ընդունվել Բանկին անդամակցելու համար՝ Կառավարիչների խորհրդի ձայների հատուկ մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

3. Այն դեպքում, երբ հայտատուն ինքնիշխան սուբյեկտ չէ կամ պատասխանատու չէ իր միջազգային հարաբերությունների իրականացման համար, Բանկին անդամակցության հայտը ներկայացվում կամ համաձայնեցվում է Բանկի այն անդամի կողմից, որը պատասխանատու է դրա միջազգային հարաբերությունների համար:

ԳԼՈՒԽ II

ԿԱՊԻՏԱԼԸ

Հոդված 4. Կանոնադրական կապիտալը

1. Բանկի հայտարարված կանոնադրական կապիտալը կազմում է հարյուր միլիարդ ամերիկյան դոլար (\$100 000 000 000)՝ բաժանված յուրաքանչյուրը 100 000 հազար դոլար (\$100 000) անվանական արժեքով մեկ միլիոն (1 000 000) բաժնետոմսերի, որոնք հասանելի են միայն անդամների կողմից բաժանորդագրման համար՝ 5-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Նախնական հայտարարված կանոնադրական կապիտալը բաժանվում է վճարված բաժնետոմսերի եւ ցպահանջ վճարման ենթակա բաժնետոմսերի: Այն բաժնետոմսերը, որոնց ընդհանուր անվանական արժեքը կազմում է քսան միլիարդ դոլար (\$20 000 000 000), վճարված բաժնետոմսեր են, իսկ այն բաժնետոմսերը, որոնց ընդհանուր անվանական արժեքը կազմում է ութսուն միլիարդ դոլար (\$80 000 000 000), ցպահանջ վճարման ենթակա բաժնետոմսեր են:

3. Բանկի հայտարարված կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել Կառավարիչների խորհրդի կողմից՝ ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով՝ այն ժամանակ եւ

այնպիսի պայմաններով, որոնք այն կհամարի նպատակահարմար, ներառյալ՝ վճարված եւ ցպահանջ վճարման ենթակա բաժնետոմսերի հարաբերակցությունը:

4. Սույն համաձայնագրում «դոլար» եզրույթը եւ «\$» նշանը հասկացվում են որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների վճարման պաշտոնական արժույթ:

Հոդված 5. Բաժնետոմսերի բաժանորդագրությունը

1. Յուրաքանչյուր անդամ բաժանորդագրվում է Բանկի կանոնադրական կապիտալի բաժնետոմսերին: Նախնական հայտարարված կանոնադրական կապիտալին յուրաքանչյուր բաժանորդագրություն կատարվում է վճարված բաժնետոմսերի եւ ցպահանջ վճարման ենթակա բաժնետոմսերի համար՝ երկուսը (2) ութի (8) հարաբերակցությամբ: 58-րդ հոդվածին համապատասխան անդամ դարձող երկրների կողմից բաժանորդագրման համար հասանելի բաժնետոմսերի նախնական թիվը սահմանվում է Ա հավելվածով:

2. 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան անդամակցության համար ընդունված երկրների կողմից բաժանորդագրման ենթակա բաժնետոմսերի նախնական թիվը սահմանվում է Կառավարիչների խորհրդի կողմից՝ պայմանով, սակայն, որ չի թույլատրվում այնպիսի բաժանորդագրություն, որը կհանգեցնի կանոնադրական կապիտալում տարածաշրջանային անդամների ունեցած մասի նվազեցմանը՝ կազմելով բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված ընդհանուր կանոնադրական կապիտալի յոթանասունհինգ (75) տոկոսից ցածր, եթե Կառավարիչների խորհուրդն այլ համաձայնություն ձեռք չի բերել ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

3. Կառավարիչների խորհուրդն անդամներից մեկի պահանջով կարող է ավելացնել այդ անդամի բաժանորդագրության չափն այնպիսի պայմաններով, որոնք կարող են սահմանվել Խորհրդի կողմից՝ ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով՝ պայմանով, սակայն, որ չի թույլատրվում որեւէ անդամի բաժանորդագրության չափի այնպիսի

ավելացում, որը կհանգեցնի կանոնադրական կապիտալում տարածաշրջանային անդամների ունեցած մասի նվազեցմանը՝ կազմելով բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված ընդհանուր կանոնադրական կապիտալի յոթանասունհինգ (75) տոկոսից ցածր, եթե Կառավարիչների խորհուրդն այլ համաձայնություն ձեռք չի բերել ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

4. Կառավարիչների խորհուրդը հինգ (5) տարուց ոչ ավելի պարբերականությամբ վերանայում է Բանկի կանոնադրական կապիտալը: Հայտարարված կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում յուրաքանչյուր անդամի ողջամիտ հնարավորություն է տրվում Կառավարիչների խորհրդի կողմից սահմանված պայմաններով բաժանորդագրվելու կապիտալի ավելացմանն այնպիսի հարաբերակցությամբ, որը համարժեք է ավելացումից անմիջապես առաջ բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված ընդհանուր կանոնադրական կապիտալի նկատմամբ մինչ այդ պահը բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված նրա կապիտալի հարաբերակցությանը: Ոչ մի անդամ պարտավոր չէ բաժանորդագրվել կանոնադրական կապիտալի ավելացման որեւէ մասի:

Հոդված 6. Բաժանորդագրման համար վճարումը

1. Բանկի վճարված կապիտալի համար 58-րդ հոդվածին համապատասխան անդամ դարձող՝ սույն համաձայնագրի յուրաքանչյուր ստորագրող կողմի կողմից ի սկզբանե բաժանորդագրությամբ նախատեսված գումարի վճարումը կատարվում է հինգ (5) մասով՝ յուրաքանչյուր անգամ այդ գումարի քսան (20) տոկոսի չափով՝ բացառությամբ սույն հոդվածի 5-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերի: Առաջին մասը յուրաքանչյուր անդամի կողմից վճարվում է սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն իր անունից 58-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան ի պահ հանձնելու օրը կամ դրանից առաջ՝ ելնելով այն հանգամանքից, թե որն է ավելի ուշ: Երկրորդ մասը ենթակա է վճարման սույն

համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց մեկ (1) տարի հետո: Մնացած երեք (3) մասերը ենթակա են վճարման հաջորդաբար նախորդ մասը վճարելու օրվանից մեկ (1) տարի հետո:

2. Նախնական վճարված կապիտալի համար ի սկզբանե բաժանորդագրությամբ նախատեսված գումարների յուրաքանչյուր մաս վճարվում է դրվարով կամ այլ փոխարկելի արժույթով՝ բացառությամբ սույն հոդվածի 5-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերի: Բանկը կարող է ցանկացած ժամանակ այդ վճարումները փոխարկել դրվարի: Վճարված եւ ցպահանջ վճարման ենթակա փոխկապակցված այն բաժնետոմսերի հետ կապված բոլոր իրավունքները, ներառյալ՝ ձայնի իրավունքը, որոնց մասով այդ վճարումները պետք է կատարվեն, սակայն դեռ չեն կատարվել, կասեցվում են մինչեւ Բանկի կողմից վճարումներն ամբողջությամբ ստանալը:

3. Ցպահանջ վճարման ենթակա՝ Բանկի կապիտալի համար բաժանորդագրությամբ նախատեսված գումարի վճարումը կարող է պահանջվել միայն Բանկի կողմից իր պարտավորությունները կատարելու համար: Այդպիսի պահանջի դեպքում վճարումը տվյալ անդամի հայեցողությամբ կարող է կատարվել դրվարով կամ այն արժույթով, որն անհրաժեշտ է Բանկի այն պարտավորությունների կատարման համար, որոնց նպատակով ներկայացվել է պահանջը: Չվճարված բաժանորդագրությունների համար պահանջները տոկոսային առումով պետք է ցպահանջ վճարման ենթակա բոլոր բաժնետոմսերի համար միասնական լինեն:

4. Բանկի կողմից որոշվում է սույն հոդվածի համաձայն ցանկացած վճարում կատարելու վայրը՝ պայմանով, որ մինչեւ Կառավարիչների խորհրդի մեկնարկային նիստը, սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված առաջին մասի վճարումը կատարվելու է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությանը՝ որպես Բանկի վստահված մարմնի:

5. Պակաս զարգացած երկիր համարվող անդամը սույն պարբերության

նպատակներով կարող է, որպես այլընտրանք, սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն իր բաժանորդագրության համար վճարել՝

- ա) ամբողջությամբ դադարում կամ այլ փոխարկելի արտարժույթով մինչեւ տասը (10) մասով՝ յուրաքանչյուր մասն ընդհանուր գումարի տասը (10) տոկոսի չափով. առաջին եւ երկրորդ մասերը ենթակա են վճարման 1-ին պարբերությամբ նախատեսված կարգով, իսկ երրորդից տասներորդ մասերը՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկրորդ եւ հաջորդող տարիները լրանալու ամսաթվին, կամ
- բ) մասամբ դադարում կամ այլ փոխարկելի արժույթով եւ յուրաքանչյուր մասի մինչեւ հիսուն (50) տոկոսը տվյալ անդամի արժույթով՝ հետեւելով սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ մասերի վճարման ժամանակացույցին: Հետեւյալ դրույթները կիրառվում են սույն «բ» ենթապարբերության համաձայն կատարվող վճարումների նկատմամբ.
 - i) Անդամը սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված բաժանորդագրության ժամանակ տեղեկացնում է Բանկին, թե վճարումների որ մասն է կատարվելու իր արժույթով:
 - ii) Այս 5-րդ պարբերության համաձայն անդամի կողմից իր արժույթով կատարվող յուրաքանչյուր վճարում իրականացվում է այն չափով, որը Բանկը համարում է համարժեք բաժանորդագրության գումարի վճարվող մասի ամբողջ արժեքին՝ դադարային արտահայտմամբ: Նախնական վճարումը կատարվում է այն չափով, որն անդամը սույնով համապատասխան է համարում, սակայն այն ենթակա է այդ վճարման ամբողջ դադարային համարժեքը կազմելու համար Բանկի կողմից անհրաժեշտ համարվող ճշգրտման, որը պետք է կատարվի այն օրվանից իննսուն (90) օրվա ընթացքում, երբ այդ գումարը ենթակա է վճարման:
 - iii) Եթե Բանկը համարում է, որ անդամի արժույթի փոխարժեքը

նվազել է զգալի չափով, ապա այդ անդամը ողջամիտ ժամկետում Բանկին իր արժույթով լրացուցիչ գումար է վճարում, որն իր բաժանորդագրության կապակցությամբ անհրաժեշտ է Բանկում պահվող ամբողջ այդ արժույթի արժեքը պահպանելու համար:

- iv) Եթե Բանկը համարում է, որ անդամի արժույթի փոխարժեքն աճել է զգալի չափով, ապա Բանկը ողջամիտ ժամկետում այդ անդամին վճարում է այդ արժույթով այն գումարը, որը նրա բաժանորդագրության կապակցությամբ անհրաժեշտ է Բանկում պահվող ամբողջ այդ արժույթի արժեքը ճշգրտելու համար:
- v) Բանկը կարող է հրաժարվել (iii) ենթապարբերության համաձայն վճարում ստանալու իր իրավունքներից, ինչպես նաեւ անդամը կարող է հրաժարվել (iv) ենթապարբերության համաձայն վճարում ստանալու իր իրավունքներից:

6. Բանկը, սույն հոդվածի 5(բ) ենթապարբերության համաձայն, բաժանորդագրության համար վճարող ցանկացած անդամից ընդունում է հասարակ մուրհակներ կամ այդ անդամի Կառավարության կամ այդ անդամի կողմից նշանակված դեպոզիտարիայի կողմից թողարկված այլ պարտատոմսեր անդամի արժույթով վճարման ենթակա գումարի փոխարեն՝ պայմանով, որ այդ գումարն անհրաժեշտ չէ Բանկին իր գործառնությունների կատարման համար: Այդպիսի մուրհակները կամ պարտատոմսերը չեն շրջանառվում, անտոկոս են եւ վճարվում են Բանկին անվանական արժեքով՝ ըստ պահանջի:

Հոդված 7. Բաժնետոմսերի պայմանները

1. Ի սկզբանե անդամների կողմից բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված կապիտալի բաժնետոմսերը թողարկվում են անվանական արժեքով: Մյուս բաժնետոմսերը թողարկվում են անվանական արժեքով, եթե Կառավարիչների խորհուրդը ձայների հատուկ մեծամասնությամբ, ինչպես

նախատեսված է 28-րդ հոդվածով, հատուկ հանգամանքներում չի որոշում դրանք թողարկել այլ պայմաններով:

2. Կապիտալի բաժնետոմսերը ենթակա չեն գրավադրման կամ ցանկացած եղանակով ծանրաբեռնման եւ կարող են փոխանցվել միայն Բանկին:

3. Բաժնետոմսերի մասով անդամների պատասխանատվությունը սահմանափակվում է դրանց թողարկման գնի չվճարված մասով:

4. Ոչ մի անդամ իր անդամակցության ուժով պատասխանատվություն չի կրում Բանկի պարտավորությունների համար:

Հոդված 8. Սովորական ռեսուրսները

Սույն համաձայնագրի իմաստով՝ Բանկի «սովորական ռեսուրսներ» եզրույթը ներառում է հետեւյալը՝

- i) Բանկի հայտարարված կանոնադրական կապիտալը, ներառյալ՝ 5-րդ հոդվածին համապատասխան բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված՝ ինչպես վճարված բաժնետոմսերը, այնպես էլ ցպահանջ վճարման ենթակա բաժնետոմսերը.
- ii) 16-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված լիազորությունների ուժով Բանկի կողմից ստացված ֆինանսական միջոցները, որոնց նկատմամբ կիրառելի է 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ նախատեսված պահանջների վերաբերյալ հանձնառությունը.
- iii) սույն հոդվածի (i) եւ (ii) ենթապարբերություններում նշված ռեսուրսների միջոցով տրված վարկերի կամ երաշխիքների փոխհատուցման արդյունքում ստացված կամ կապիտալում ներդրումների եւ այդ ռեսուրսների միջոցով 11-րդ հոդվածի 2 (vi) ենթապարբերության համաձայն հաստատված՝ այլ տեսակի ֆինանսավորման արդյունքում ստացված ֆինանսական միջոցները.
- iv) վերոնշյալ ֆինանսական միջոցներով տրված այն վարկերից կամ

երաշխիքներից ստացված եկամուտը, որոնց նկատմամբ կիրառելի է 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված՝ պահանջների վերաբերյալ հանձնառությունը, եւ

- v) Բանկի կողմից ստացված ցանկացած այլ ֆինանսական միջոց կամ եկամուտ, որը սույն համաձայնագրի 17-րդ հոդվածում նշված իր Հատուկ ֆոնդերի ռեսուրսների մաս չի կազմում:

ԳԼՈՒԽ III

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 9. Ռեսուրսների օգտագործումը

Բանկի ռեսուրսներն ու հնարավորություններն օգտագործվում են բացառապես, համապատասխանաբար, 1-ին եւ 2-րդ հոդվածներով սահմանված նպատակի եւ գործառույթների իրականացման համար եւ բանկային գործունեության ճշգրիտ սկզբունքներին համապատասխան:

Հոդված 10. Սովորական եւ հատուկ գործառնությունները

1. Բանկի գործառնությունները ներառում են՝
 - i) 8-րդ հոդվածում նշված՝ Բանկի սովորական ռեսուրսների միջոցով ֆինանսավորվող սովորական գործառնությունները, եւ
 - ii) 17-րդ հոդվածում նշված՝ Հատուկ ֆոնդերի ռեսուրսների միջոցով ֆինանսավորվող հատուկ գործառնությունները:

Գործառնությունների երկու տեսակով առանձին-առանձին կարող են ֆինանսավորվել միեւնույն նախագծի կամ ծրագրի տարրեր:

2. Բանկի սովորական ռեսուրսները եւ Հատուկ ֆոնդերի ռեսուրսները մշտապես եւ բոլոր առումներով պահվում, օգտագործվում, տրամադրվում,

ներդրվում կամ ցանկացած այլ եղանակով տնօրինվում են միմյանցից լիովին առանձին: Բանկի ֆինանսական հաշվետվություններում սովորական գործառնությունները եւ հատուկ գործառնությունները ներկայացվում են առանձին-առանձին:

3. Բանկի սովորական ռեսուրսները ոչ մի դեպքում չպետք է նախատեսվեն կամ օգտագործվեն հատուկ գործառնությունների կամ այն գործողությունների հետեանքով առաջացած կորուստները ծածկելու կամ պարտավորությունները կատարելու նպատակով, որոնց համար ի սկզբանե օգտագործվել կամ տրամադրվել էին Հատուկ ֆոնդերի ռեսուրսները:

4. Անմիջապես սովորական գործառնությունների հետ կապված ծախսերը վերագրվում են Բանկի սովորական ռեսուրսներին: Անմիջապես հատուկ գործառնությունների հետ կապված ծախսերը վերագրվում են Հատուկ ֆոնդերի ռեսուրսներին: Ցանկացած այլ ծախս վերագրվում է Բանկի հայեցողությամբ:

Հոդված 11. Շահառուները եւ գործառնությունների կատարման մեթոդները

1. ա) Բանկը կարող է ֆինանսավորում տրամադրել կամ նպաստել ֆինանսավորման տրամադրմանը ցանկացած անդամի կամ դրա ցանկացած գործակալության, հաստատության կամ քաղաքական ստորաբաժանման, կամ անդամի տարածքում գործող ցանկացած սուբյեկտի կամ ձեռնարկության, ինչպես նաեւ միջազգային կամ տարածաշրջանային գործակալություններին կամ սուբյեկտներին, որոնք առնչվում են տարածաշրջանի տնտեսական զարգացմանը:
- բ) Բանկը հատուկ հանգամանքներում կարող է աջակցել վերը նշված «ա» ենթապարբերության մեջ չնշված շահառուի, միայն եթե Կառավարիչների խորհուրդը ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով՝
 - i) որոշի, որ այդ աջակցությունը ծառայում է Բանկի նպատակին եւ

համահունչ է դրա գործառույթներին, ինչպես նաեւ բխում է Բանկին անդամակցողների շահերից, եւ ii) սահմանի սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն աջակցության այն տեսակները, որոնք կարող են տրամադրվել այդ շահառուին:

2. Բանկը կարող է կատարել իր գործառնությունները հետեւյալ ցանկացած եղանակով՝

- i) տրամադրելով, համաֆինանսավորելով ուղղակի վարկերը կամ մասնակցելով դրանց,
- ii) ներդնելով ֆինանսական միջոցներ հաստատության կամ ձեռնարկության սեփական կապիտալում,
- iii) երաշխավորելով տնտեսական զարգացման համար նախատեսված վարկերի տրամադրումը թե՛ որպես առաջնային, թե՛ որպես երկրորդային պարտավորված մարմին, ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասնակիորեն,
- iv) ներգրավելով Հատուկ ֆոնդերի ռեսուրսները՝ դրանց օգտագործումը սահմանող համաձայնագրերին համապատասխան,
- v) տրամադրելով տեխնիկական աջակցություն՝ 15-րդ հոդվածին համապատասխան, կամ
- vi) ֆինանսավորման այլ եղանակներով, որոնք կարող են սահմանվել Կառավարիչների խորհրդի կողմից՝ ձայների հատուկ մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

Հոդված 12. Սովորական գործառնությունների մասով սահմանափակումները

1. Բանկի կողմից 11-րդ հոդվածի 2 (i), (ii), (iii) եւ (vi) ենթապարբերություններով նախատեսված դրա սովորական գործառնությունների շրջանակներում տրամադրված վարկերի, կապիտալում ներդրումների, երաշխիքների եւ ֆինանսավորման այլ տեսակների ընդհանուր չմարված գումարը

ոչ մի դեպքում չպետք է ավելացվի, եթե այդ ավելացման արդյունքում այն գերազանցելու է դրա սովորական ռեսուրսներում ներառված՝ բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված չարժեզրկված կապիտալի, պահուստային ֆոնդի եւ չբաշխված շահույթի ամբողջ գումարը: Անկախ նախորդ նախադասության դրույթներից՝ Կառավարիչների խորհուրդը ծայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով, ցանկացած ժամանակ կարող է սահմանել, որ, ելնելով Բանկի ֆինանսական դրությունից ու ֆինանսական վիճակից, սույն պարբերությամբ սահմանված սահմանափակումը կարող է բարձրացվել մինչեւ Բանկի սովորական ռեսուրսներում ներառված՝ բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված չարժեզրկված կապիտալի, պահուստային ֆոնդի եւ չբաշխված շահույթի 250 տոկոսը:

2. Բանկի՝ կապիտալում կատարված ներդրումների գումարը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված՝ դրա ընդհանուր վճարված չարժեզրկված կապիտալին եւ ընդհանուր պահուստային ֆոնդին համարժեք գումարը:

Հոդված 13. Գործառնական սկզբունքները

Բանկի գործառնությունները պետք է իրականացվեն ստորեւ սահմանված սկզբունքներին համապատասխան:

1. Բանկն իր գործառնություններն իրականացնելիս պետք է առաջնորդվի բանկային գործունեության ճշգրիտ սկզբունքներով:

2. Բանկի գործառնությունները հիմնականում նպատակաուղղված են հատուկ նախագծերի կամ հատուկ ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը, կապիտալում ներդրումներին եւ 15-րդ հոդվածին համապատասխան տրամադրվող տեխնիկական աջակցությանը:

3. Բանկը չի ֆինանսավորում անդամի տարածքում գործող որեւէ ձեռնարկության, եթե այդ անդամն առարկում է այդ ֆինանսավորմանը:

4. Բանկն ապահովում է, որ իր յուրաքանչյուր գործառնություն

համապատասխանի Բանկի գործառնական ու ֆինանսական քաղաքականությանը, ներառյալ, առանց սահմանափակման, բնապահպանական եւ սոցիալական ազդեցությանը վերաբերող քաղաքականությունները:

5. Ֆինանսավորման համար դիմումն ուսումնասիրելիս Բանկը պատշաճ ուշադրություն է դարձնում շահառուի՝ Բանկի տեսանկյունից ողջամիտ համարվող պայմաններով այլ տեղից ֆինանսավորում կամ այլ հնարավորություններ ձեռք բերելու կարողությանը՝ հաշվի առնելով բոլոր համապատասխան գործոնները:

6. Ֆինանսավորում տրամադրելիս կամ երաշխավորելիս Բանկը պատշաճ ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, թե արդյոք շահառուն եւ երաշխավորը, եթե այդպիսին կա, կկարողանան կատարել ֆինանսավորման պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները:

7. Ֆինանսավորում տրամադրելիս կամ երաշխավորելիս այնպիսի ֆինանսական պայմանները, ինչպիսիք են տոկոսադրույքը եւ այլ վճարներ, ինչպես նաեւ հիմնական գումարի վճարման ժամանակացույցը, պետք է Բանկի տեսանկյունից համապատասխան լինեն՝ տվյալ ֆինանսավորման եւ Բանկի համար առկա ռիսկի առումով:

8. Բանկը որեւէ սահմանափակում չի դնում Բանկի հասարակ կամ հատուկ գործառնությունների շրջանակներում իրականացվող ֆինանսավորման հասույթով ցանկացած երկրից ապրանքների եւ ծառայությունների գնման վրա:

9. Բանկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ Բանկի կողմից տրամադրված, երաշխավորված կամ դրա մասնակցությամբ իրականացված ցանկացած ֆինանսավորման հասույթ օգտագործվի միայն այն նպատակներով, որոնց համար տրամադրվել է ֆինանսավորումը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով տնտեսման ու արդյունավետության նկատառումները:

10. Բանկը պատշաճ կերպով հաշվի է առնում, որ ցանկալի է խուսափել ցանկացած անդամի օգտին իր ռեսուրսների անհամաչափ օգտագործումից:

11. Բանկը փորձում է պահպանել սեփական կապիտալում դրա

ներդրումների ողջամիտ բազմազանեցումը (դիվերսիֆիկացիան): Կապիտալում դրա ներդրումների կապակցությամբ Բանկը որեւէ պատասխանատվություն չի ստանձնում ցանկացած այն սուբյեկտի կամ ձեռնարկության կառավարման համար, որում ներդրում է կատարել, եւ չի փորձում ձեռք բերել տվյալ սուբյեկտի կամ ձեռնարկության վերահսկիչ փաթեթը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է Բանկի ներդրումը պաշտպանելու անհրաժեշտությունից:

Հոդված 14. Ֆինանսավորման պայմանները

1. Բանկի կողմից տրված, դրա մասնակցությամբ տրամադրված կամ դրա կողմից երաշխավորված վարկերի դեպքում պայմանագրով պետք է սահմանվեն տվյալ վարկի կամ երաշխավորման պայմանները՝ 13-րդ հոդվածով սահմանված գործառնական սկզբունքներին համապատասխան եւ սույն համաձայնագրի մյուս դրույթների համաձայն: Բանկն այդ պայմանները սահմանելիս ամբողջությամբ հաշվի է առնում իր եկամուտը եւ ֆինանսական դրությունը պաշտպանելու անհրաժեշտությունը:

2. Եթե վարկերի կամ վարկերի երաշխիքների շահառուն անդամ չէ, ապա Բանկը նպատակահարմար համարելու դեպքում կարող է պահանջել, որ այն անդամը, որի տարածքում իրականացվելու է տվյալ նախագիծը, կամ որեւէ պետական մարմին կամ Բանկի համար ընդունելի՝ տվյալ անդամի ցանկացած հաստատություն երաշխավորի հիմնական գումարի, տոկոսի եւ վարկի հետ կապված այլ վճարների վճարումը՝ դրա պայմաններին համապատասխան:

3. Կապիտալում ցանկացած ներդրման գումար չպետք է գերազանցի տվյալ սուբյեկտի կամ ձեռնարկության սեփական կապիտալի՝ Տնօրենների խորհրդի կողմից հաստատված քաղաքականության համաձայն թույլատրված տոկոսը:

4. Բանկն իր գործառնությունների շրջանակներում ֆինանսավորում կարող է տրամադրել տվյալ երկրի արժույթով՝ արժույթի հետ կապված ռիսկերի նվազեցմանն ուղղված քաղաքականություններին համապատասխան:

Հոդված 15. Տեխնիկական աջակցությունը

1. Բանկը կարող է տրամադրել տեխնիկական խորհրդատվություն եւ աջակցություն, ինչպես նաեւ աջակցության այլ նմանատիպ ձեւեր, որոնք ծառայում են դրա նպատակին եւ համահունչ են դրա գործառույթներին:
2. Եթե այդպիսի ծառայությունների տրամադրման հետ կապված ծախսերը փոխհատուցելի չեն, ապա Բանկն այդ ծախսերը վերագրում է Բանկի եկամուտներին:

ԳԼՈՒԽ IV

ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 16. Ընդհանուր լիազորությունները

Ի հավելումն սույն համաձայնագրի այլ մասերով սահմանված լիազորությունների՝ Բանկն ունի նաեւ ստորեւ սահմանված լիազորությունները:

1. Բանկը կարող է ներգրավել ֆինանսական միջոցներ՝ փոխառությամբ կամ այլ եղանակով, անդամ երկրներում կամ այլուր՝ համապատասխան իրավական դրույթների համաձայն:
2. Բանկը կարող է գնել կամ վաճառել Բանկի կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթերը կամ այն արժեթղթերը, որոնցում այն ներդրում է կատարել:
3. Բանկը կարող է երաշխավորել այն արժեթղթերը, որոնցում այն ներդրում է կատարել՝ դրանց վաճառքը հեշտացնելու նպատակով:
4. Բանկը կարող է իրականացնել ցանկացած կազմակերպության կամ ձեռնարկության կողմից թողարկված արժեթղթերի անդերոայթինգ կամ մասնակցել այդ գործընթացին՝ Բանկի նպատակին համահունչ նպատակներով:

5. Բանկը կարող է ներդնել կամ որպես ավանդ հանձնել այն ֆինանսական միջոցները, որոնք իր գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ չեն:

6. Բանկն ապահովում է, որ Բանկի կողմից թողարկված կամ երաշխավորված յուրաքանչյուր արժեթուղթ դիմերեսին ունենա հստակ տեսանելի նշում այն մասին, որ դա որեւէ կառավարության պարտավորությունը չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա իրականում որոշակի կառավարության պարտավորությունն է, ինչի դեպքում այդպես էլ նշվում է:

7. Բանկը Կառավարիչների խորհրդի կողմից հաստատված՝ հավատարմագրային կառավարման հիմնադրամի շրջանակներում կարող է ձեւավորել եւ կառավարել այլ կողմերի օգտին հավատարմագրային կառավարման հիմնադրամում պահվող ֆինանսական միջոցներ՝ պայմանով, որ հավատարմագրային կառավարման այդ հիմնադրամները ծառայեն Բանկի նպատակին եւ համահունչ լինեն դրա գործառնություններին:

8. Բանկը կարող է ստեղծել դուստր կազմակերպություններ, որոնք նախատեսված են Բանկի նպատակին ծառայելու համար եւ համահունչ են դրա գործառնություններին, միայն Կառավարիչների խորհրդի հաստատմամբ՝ ձայների հատուկ մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

9. Բանկը կարող է իրականացնել այնպիսի այլ լիազորություններ եւ սահմանել այնպիսի կանոններ եւ կարգավորումներ, որոնք կարող են անհրաժեշտ կամ նպատակահարմար լինել դրա նպատակի եւ գործառնությունների իրականացման համար՝ սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Հոդված 17. Հատուկ ֆոնդերը

1. Բանկը կարող է ընդունել Հատուկ ֆոնդեր, որոնք նախատեսված են Բանկի նպատակին ծառայելու համար եւ համահունչ են դրա գործառնություններին. այդ Հատուկ ֆոնդերը Բանկի ռեսուրսներն են: Յանկացած Հատուկ ֆոնդի կառավարման հետ կապված բոլոր ծախսերը վերագրվում են այդ Հատուկ ֆոնդին:

2. Բանկի կողմից ընդունված Հատուկ ֆոնդերը կարող են օգտագործվել Բանկի նպատակին ու գործառույթներին համահունչ պայմաններով, ինչպես նաև այդ ֆոնդերին առնչվող համաձայնագրի հիման վրա:

3. Բանկն ընդունում է այնպիսի հատուկ կանոններ եւ կանոնակարգեր, որոնք կարող են պահանջվել յուրաքանչյուր Հատուկ ֆոնդի ստեղծման, կառավարման ու օգտագործման համար: Այդ կանոններն ու կանոնակարգերը պետք է համահունչ լինեն սույն համաձայնագրի դրույթներին՝ բացառությամբ այն դրույթների, որոնք հստակորեն կիրառելի են միայն Բանկի սովորական գործառնությունների նկատմամբ:

4. «Հատուկ ֆոնդերի ռեսուրսներ» եզրույթը վերաբերում է ցանկացած Հատուկ ֆոնդի ռեսուրսի եւ ներառում է՝

- i) այն ֆինանսական միջոցները, որոնք Բանկն ընդունում է որեւէ Հատուկ ֆոնդում ներառելու համար,
- ii) այն ֆինանսական միջոցները, որոնք ստացվել են ցանկացած Հատուկ ֆոնդի ռեսուրսներից ֆինանսավորվող վարկերի կամ երաշխիքների եւ կապիտալում ցանկացած ներդրումից ստացված հասույթի կապակցությամբ, եւ որոնք Բանկի՝ այդ Հատուկ ֆոնդը կարգավորող կանոնների ու կանոնակարգերի համաձայն ներառվում են այդ Հատուկ ֆոնդում,
- iii) Հատուկ ֆոնդերի ռեսուրսները ներդնելու արդյունքում ստացված եկամուտը, եւ
- iv) ցանկացած այլ ռեսուրս, որը գտնվում է ցանկացած Հատուկ ֆոնդի տրամադրության տակ:

Հոդված 18. Զուտ եկամտի հատկացումն ու բաշխումը

1. Կառավարիչների խորհուրդն առնվազն տարին մեկ անգամ, պահուստային ֆոնդն ապահովելուց հետո, որոշում է, թե Բանկի զուտ եկամտի որ

մասը պետք է հատկացվի որպես չբաշխված շահույթ կամ այլ նպատակների համար, եւ որ մասը, առկայության դեպքում, պետք է բաշխվի անդամների միջեւ: Բանկի զուտ եկամուտն այլ նպատակներով հատկացնելու վերաբերյալ ցանկացած որոշում ընդունվում է ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

2. Նախորդ պարբերության մեջ նշված բաշխումը կատարվում է յուրաքանչյուր անդամի բաժնետոմսերի թվի համամասնությամբ, իսկ վճարումները կատարվում են Կառավարիչների խորհրդի կողմից սահմանված կարգով եւ արժույթով:

Հոդված 19. Արժույթները

1. Անդամները որեւէ սահմանափակում չեն դնում արժույթների վրա, ի թիվս այլնի, ցանկացած երկրում վճարում կատարելու համար Բանկի կամ Բանկի ցանկացած շահառուի կողմից այն ստանալու, պահելու, օգտագործելու կամ փոխանցելու կապակցությամբ:

2. Սույն համաձայնագրի համաձայն՝ որեւէ արժույթ մյուսի համեմատ գնահատելու կամ արժույթի փոխարկելիությունը որոշելու անհրաժեշտության դեպքում այդպիսի գնահատումը կատարվում է կամ որոշումն ընդունվում է Բանկի կողմից:

Հոդված 20. Բանկի պարտավորությունները կատարելու մեթոդները

1. Բանկի սովորական գործառնությունների ժամանակ Բանկի կողմից տրված, դրա մասնակցությամբ տրամադրված կամ դրա կողմից երաշխավորված վարկերի մարման ժամկետը լրանալու կամ դրանք չվերադարձնելու եւ կապիտալում ներդրումների կամ 11-րդ հոդվածի 2 (vi) ենթապարբերությամբ նախատեսված՝ ֆինանսավորման այլ տեսակների մասով կորուստների դեպքում Բանկը ձեռնարկում է այն գործողությունները, որոնք նպատակահարմար է համարում: Բանկը համապատասխան պահուստային միջոցներ է նախատեսում հնարավոր կորուստներին դիմակայելու համար:

2. Բանկի սովորական գործառնությունների արդյունքում առաջացող կորուստները վերագրվում են՝

- i) առաջին՝ վերելում՝ 1-ին պարբերության մեջ նշված պահուստային միջոցներին,
- ii) երկրորդ՝ զուտ եկամտին,
- iii) երրորդ՝ պահուստային ֆոնդին եւ չբաշխված շահույթին,
- iv) չորրորդ՝ վճարված չարժեզրկված կապիտալին, եւ
- v) վերջին՝ ցպահանջ վճարման ենթակա, սակայն չպահանջված՝ բաժանորդագրության միջոցով տեղաբաշխված կապիտալի համապատասխան գումարին, որը պահանջվում է 6-րդ հոդվածի 3-րդ պարբերության դրույթներին համապատասխան:

ԳԼՈՒԽ V

ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 21. Կառուցվածքը

Բանկը կազմված է Կառավարիչների խորհրդից, Տնօրենների խորհրդից, Նախագահից, Նախագահի մեկ կամ ավելի տեղակալներից եւ ըստ անհրաժեշտության՝ այլ պաշտոնատար անձանցից ու անձնակազմից:

Հոդված 22. Կառավարիչների խորհուրդը. Կազմը

1. Յուրաքանչյուր անդամ պետք է ներկայացված լինի Կառավարիչների խորհրդում եւ նշանակի մեկ կառավարիչ եւ կառավարչի մեկ տեղակալ: Յուրաքանչյուր կառավարիչ եւ կառավարչի տեղակալ իրենց գործառույթներն իրականացնում են նշանակող մարմնի հայեցողությամբ: Կառավարչի տեղակալը կարող է քվեարկել միայն հիմնական կառավարչի բացակայության դեպքում:

2. Յուրաքանչյուր ամենամյա նիստի ժամանակ Խորհուրդը կառավարիչներից մեկին ընտրում է որպես Նախագահ, որը պաշտոնավարում է մինչև հաջորդ Նախագահի ընտրությունը:

3. Կառավարիչներն ու կառավարիչների տեղակալներն իրենց գործառույթներն իրականացնում են առանց Բանկից վարձատրություն ստանալու, սակայն Բանկը կարող է հոգալ նիստերին ներկա գտնվելու հետ կապված ողջամիտ ծախսերը:

Հոդված 23. Կառավարիչների Խորհուրդը. Լիազորությունները

1. Բանկի բոլոր լիազորությունները վերապահվում են Կառավարիչների Խորհրդին:

2. Կառավարիչների Խորհուրդը կարող է Տնօրենների Խորհրդին պատվիրակել իր ցանկացած լիազորություն կամ իր բոլոր լիազորությունները՝ բացառությամբ հետևյալ լիազորությունների՝

- i) նոր անդամներ ընդունելը եւ նրանց ընդունելու պայմանները սահմանելը,
- ii) Բանկի հայտարարված կանոնադրական կապիտալն ավելացնելը կամ նվազեցնելը,
- iii) անդամին հեռացնելը,
- iv) Տնօրենների Խորհրդի կողմից սույն համաձայնագրի մեկնաբանությունների կամ կիրառման վերաբերյալ բողոքների մասին որոշումներ կայացնելը,
- v) Բանկի տնօրեններին ընտրելը եւ տնօրենների ու տնօրենների տեղակալների համար փոխհատուցվող ծախսերը եւ վարձատրության չափը, առկայության դեպքում, սահմանելը՝ 25-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն,
- vi) Նախագահին ընտրելը, նրան պաշտոնից հեռացնելը կամ ազատելը եւ նրա վարձատրության չափն ու աշխատանքի մյուս պայմանները

սահմանելը,

- vii) աուդիտորների հաշվետվությունն ուսումնասիրելուց հետո ընդհանուր հաշվապահական հաշվեկշիռը եւ Բանկի շահույթի ու կորուստների վերաբերյալ հաշվետվությունները հաստատելը,
- viii) Բանկի պահուստային ֆոնդը եւ զուտ շահույթի հատկացումն ու բաշխումը որոշելը,
- ix) սույն համաձայնագիրը փոփոխելը,
- x) Բանկի գործառնությունները դադարեցնելու ու դրա ակտիվները բաշխելու մասին որոշում կայացնելը, եւ
- xi) այնպիսի այլ լիազորություններ իրականացնելը, որոնք սույն համաձայնագրով հստակորեն վերապահված են Կառավարիչների խորհրդին:

3. Կառավարիչների խորհուրդը պահպանում է սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն Տնօրենների խորհրդին պատվիրակված ցանկացած հարց վերահսկելու իր լիարժեք իրավունքը:

Հոդված 24. Կառավարիչների խորհուրդը. Ընթացակարգը

1. Կառավարիչների խորհուրդը հրավիրում է ամենամյա նիստ եւ Կառավարիչների խորհրդի կողմից նախատեսված կամ Տնօրենների խորհրդի նախաձեռնությամբ հրավիրված այլ նիստեր: Տնօրենների խորհրդի նախաձեռնությամբ Կառավարիչների խորհրդի նիստ հրավիրվում է Բանկի հինգ (5) անդամի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում:

2. Կառավարիչների մեծամասնության ներկայության դեպքում Կառավարիչների խորհրդի ցանկացած նիստ իրավազոր է՝ պայմանով, որ այդ մեծամասնությունն ունի անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:

3. Կառավարիչների խորհուրդը կանոնակարգով սահմանում է

ընթացակարգեր, որոնց համաձայն Տնօրենների խորհուրդը կոնկրետ հարցի շուրջ կարող է անցկացնել կառավարիչների քվեարկություն առանց նիստի, եւ որոնցով նախատեսվում է հատուկ հանգամանքներում Կառավարիչների խորհրդի էլեկտրոնային նիստերի հնարավորություն:

4. Կառավարիչների խորհուրդը եւ Տնօրենների խորհուրդը դրա լիազորությունների սահմաններում կարող են ստեղծել դուստր կազմակերպություններ եւ ընդունել Բանկի գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ կամ նպատակահարմար կանոններ ու կանոնակարգեր:

Հոդված 25. Տնօրենների խորհուրդը. Կազմը

1. Տնօրենների խորհուրդը կազմված է տասներկու (12) անդամներից, որոնք Կառավարիչների խորհրդի անդամ չեն, եւ որոնցից՝

- i) ինը (9) ընտրվում են տարածաշրջանային անդամներին ներկայացնող կառավարիչների կողմից, եւ
- ii) երեքը (3) ընտրվում են ոչ տարածաշրջանային անդամներին ներկայացնող կառավարիչների կողմից:

Տնօրենները պետք է լինեն տնտեսական եւ ֆինանսական հարցերում բարձր որակավորում ունեցող անձինք եւ ընտրվեն Բ հավելվածին համապատասխան: Տնօրենները ներկայացնում են այն անդամներին, որոնց կառավարիչների կողմից իրենք ընտրվել են, ինչպես նաեւ այն անդամներին, որոնց կառավարիչներն իրենց ձայնի իրավունքը տվել են նրանց:

2. Կառավարիչների խորհուրդը ժամանակ առ ժամանակ վերանայում է Տնօրենների խորհրդի չափն ու կազմը եւ նպատակահարմարության դեպքում կարող է ավելացնել կամ նվազեցնել չափը կամ փոփոխել կազմը՝ ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

3. Յուրաքանչյուր տնօրեն նշանակում է տնօրենի տեղակալ՝ իր բացակայության դեպքում իր փոխարեն գործելու լիարժեք լիազորություններով:

Կառավարիչների խորհուրդն ընդունում է այնպիսի կանոններ, որոնք անդամների սահմանված թվից ավելի անդամների կողմից ընտրված տնօրենին հնարավորություն են տալիս նշանակելու տնօրենի եւս մեկ տեղակալ:

4. Տնօրեններն ու տնօրենների տեղակալները պետք է լինեն անդամ երկրների քաղաքացիներ: Երկու կամ ավելի տնօրեն, ինչպես նաեւ տնօրենի ցանկացած երկու կամ ավելի տեղակալ չեն կարող ունենալ նույն քաղաքացիությունը: Տնօրենների տեղակալները կարող են մասնակցել Խորհրդի նիստերին, սակայն կարող են քվեարկել միայն տնօրենի փոխարեն հանդես գալու դեպքում:

5. Տնօրենները պաշտոնավարում են երկու (2) տարի ժամկետով եւ կարող են վերընտրվել:

ա) Տնօրենները շարունակում են զբաղեցնել իրենց պաշտոնը, քանի դեռ չեն ընտրվել հաջորդ տնօրենները եւ ստանձնել իրենց պաշտոնը:

բ) Եթե տնօրենի պաշտոնը թափուր է մնում ավելի քան հարյուր ութսուն (180) օր՝ մինչեւ նրա պաշտոնավարման ժամկետի ավարտը, ապա պաշտոնավարման մնացած ժամկետի համար հաջորդ տնօրենն ընտրվում է Բ հավելվածին համապատասխան՝ նախորդ տնօրենին ընտրած կառավարիչների կողմից: Այդպիսի ընտրության համար պահանջվում է այդ կառավարիչների ձայների մեծամասնությունը: Տնօրենին ընտրած կառավարիչները նույն կերպ կարող են ընտրել հաջորդ տնօրենին, եթե տնօրենի պաշտոնը թափուր է մնում հարյուր ութսուն (180) կամ պակաս օր՝ մինչեւ նրա պաշտոնավարման ժամկետի ավարտը:

գ) Քանի դեռ տնօրենի պաշտոնը թափուր է, նախկին տնօրենի տեղակալն է իրականացնում վերջինիս լիազորությունները՝ բացառությամբ տնօրենի տեղակալ նշանակելու լիազորության:

6. Տնօրեններն ու տնօրենների տեղակալներն իրենց գործառույթներն

իրականացնում են առանց Բանկից վարձատրություն ստանալու, եթե Կառավարիչների խորհուրդն այլ բան չորոշի, սակայն Բանկը կարող է հոգալ նիստերին ներկա գտնվելու հետ կապված ողջամիտ ծախսերը:

Հոդված 26. Տնօրենների խորհուրդը. Լիազորությունները

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Բանկի ընդհանուր գործառնությունների ղեկավարման համար եւ այդ նպատակով, ի հավելումն սույն համաձայնագրով ուղղակիորեն սահմանված լիազորությունների, իրականացնում է Կառավարիչների խորհրդի կողմից իրեն պատվիրակված բոլոր լիազորությունները եւ մասնավորապես՝

- i) նախապատրաստում է Կառավարիչների խորհրդի աշխատանքը,
- ii) սահմանում է Բանկի քաղաքականությունները եւ անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երեք չորրորդը ներկայացնող մեծամասնությամբ որոշումներ է ընդունում գործառնական ու ֆինանսական հիմնական քաղաքականությունների եւ Բանկի քաղաքականությունների համաձայն Նախագահին լիազորություններ պատվիրակելու վերաբերյալ,
- iii) ընդունում է որոշումներ Բանկի՝ 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված գործառնությունների վերաբերյալ եւ անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երեք չորրորդը ներկայացնող մեծամասնությամբ որոշում է ընդունում այդ լիազորությունը Նախագահին պատվիրակելու վերաբերյալ,
- iv) պարբերաբար վերահսկում է Բանկի կառավարումն ու գործունեությունը եւ այդ նպատակով ստեղծում է վերահսկողության մեխանիզմ՝ թափանցիկության, բացության, անկախության եւ հաշվետվողականության սկզբունքներին համահունչ,
- v) հաստատում է Բանկի ռազմավարությունը, տարեկան պլանը եւ բյուջեն,

- vi) նշանակում է այնպիսի հանձնաժողովներ, ինչպիսիք նպատակահարմար է համարում, եւ
- vii) Կառավարիչների խորհրդի հաստատմանն է ներկայացնում յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար աուդիտի ենթարկված հաշվետվությունները:

Հոդված 27. Տնօրենների խորհուրդը. Ընթացակարգը

1. Տնօրենների խորհուրդը տարվա ընթացքում պարբերաբար հանդիպում է այնքան հաճախ, որքան անհրաժեշտ է Բանկի գործունեության համար: Տնօրենների խորհուրդը գործում է ոչ ռեզիդենտի հիմունքներով, եթե այլ բան չի որոշվում Կառավարիչների խորհրդի կողմից՝ ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով: Նիստ կարող է հրավիրվել Նախագահի կողմից կամ երեք (3) տնօրենների պահանջով:

2. Տնօրենների մեծամասնության ներկայության դեպքում Տնօրենների խորհրդի ցանկացած նիստ իրավազոր է՝ պայմանով, որ այդ մեծամասնությունն ունի անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:

3. Կառավարիչների խորհուրդն ընդունում է այնպիսի կանոնակարգեր, որոնց համաձայն անդամը, իր քաղաքացիությունն ունեցող տնօրենի բացակայության դեպքում, կարող է ուղարկել քվեարկելու իրավունք չունեցող ներկայացուցիչ՝ Տնօրենների խորհրդի ցանկացած նիստի ներկա գտնվելու նպատակով, եթե քննարկվում է հատկապես այդ անդամի վրա ազդեցություն ունեցող որեւէ հարց:

4. Տնօրենների խորհուրդը սահմանում է ընթացակարգեր, որոնցով խորհուրդը կարող է անցկացնել էլեկտրոնային նիստ կամ քվեարկել որեւէ հարցի վերաբերյալ՝ առանց նիստ հրավիրելու:

Հոդված 28. Քվեարկությունը

1. Յուրաքանչյուր անդամի՝ ձայների ընդհանուր թիվը բաղկացած է նրա բազային ձայների, բաժնետոմսերի ձայների, իսկ հիմնադիր անդամի դեպքում՝

նաեւ նրա՝ որպէս հիմնադիր անդամի ձայների հանրագումարից:

- i) Յուրաքանչյուր անդամի բազային ձայները ձայների այն թիվն է, որն ստացվում է բոլոր անդամների՝ բազային ձայների, բաժնետոմսերի ձայների եւ հիմնադիր անդամի ձայների ընդհանուր գումարի տասներկու (12) տոկոսը բոլոր անդամների միջեւ հավասարապէս բաշխելու արդյունքում:
- ii) Յուրաքանչյուր անդամի՝ բաժնետոմսերի ձայների թիվը հավասար է Բանկի կանոնադրական կապիտալում այդ անդամի ունեցած բաժնետոմսերի թվին:
- iii) Յուրաքանչյուր հիմնադիր անդամի հատկացվում է հիմնադիր անդամի վեց հարյուր (600) ձայն:

Այն դեպքում, երբ անդամը չի վճարում 6-րդ հոդվածով նախատեսված՝ վճարված բաժնետոմսերի հետ կապված իր պարտավորությունների մասով վճարման ենթակա գումարի որեւէ մաս, անդամի կողմից օգտագործման ենթակա՝ բաժնետոմսերի ձայների թիվը, քանի դեռ վճարումը չի կատարվում, համաչափորեն նվազում է այդ անդամի կողմից բաժանորդագրված՝ վճարված բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքում վճարման ենթակա գումարի եւ չվճարված գումարի միջեւ տոկոսային հարաբերակցության չափով:

2. Կառավարիչների խորհրդում քվեարկելիս յուրաքանչյուր կառավարիչ ունի իր կողմից ներկայացված անդամի անունից քվեարկելու իրավունք:

- i) Բացառությամբ սույն համաձայնագրով հստակ նախատեսված այլ դեպքերի՝ Կառավարիչների խորհրդի քննարկմանը ներկայացված բոլոր հարցերը որոշվում են ձայների մեծամասնությամբ:
- ii) Կառավարիչների խորհրդի ձայների գերակշռող մեծամասնության համար պահանջվում է, որ կողմ քվեարկի կառավարիչների ընդհանուր թվի երկու երրորդը, որն ունի ոչ պակաս, քան անդամների ձայների ընդհանուր թվի երեք քառորդը:

- iii) Կառավարիչների խորհրդի ձայների հատուկ մեծամասնության համար պահանջվում է, որ կողմ քվեարկի կառավարիչների ընդհանուր թվի մեծամասնությունը, որն ունի ոչ պակաս, քան անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությունը:

3. Տնօրենների խորհրդում քվեարկելիս յուրաքանչյուր տնօրեն այնքան ձայնով քվեարկելու իրավունք ունի, որքան ձայնի նկատմամբ իրավունք ունեն նրան ընտրած կառավարիչները, եւ որքան ձայնի նկատմամբ իրավունք ունեն իրենց ձայները Բ հավելվածի համաձայն նրան փոխանցած բոլոր կառավարիչները:

- i) Մեկից ավելի անդամի փոխարեն քվեարկելու իրավունք ունեցող տնօրենը կարող է այդ անդամների համար քվեարկել առանձին:
- ii) Բացառությամբ սույն համաձայնագրով հստակ նախատեսված այլ դեպքերի՝ Տնօրենների խորհրդի քննարկմանը ներկայացված բոլոր հարցերը որոշվում են ձայների մեծամասնությամբ:

Հոդված 29. Նախագահը

1. Կառավարիչների խորհուրդը բաց, թափանցիկ եւ անձի անհատական արժանիքների վրա հիմնված գործընթացների միջոցով, ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով, ընտրում է Բանկի նախագահին: Նա պետք է լինի տարածաշրջանային անդամ պետության քաղաքացի: Նախագահը պաշտոնավարման ընթացքում չի կարող լինել կառավարիչ կամ տնօրեն կամ նրանցից որեւէ մեկի տեղակալ:

2. Նախագահի պաշտոնավարման ժամկետը հինգ (5) տարի է: Նա ունի մեկ անգամ վերընտրվելու իրավունք: Նախագահի լիազորությունները կարող են կասեցվել կամ դադարեցվել, եթե Կառավարիչների խորհուրդը ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով, այդպիսի որոշում է կայացնում:

- ա) Եթե նախագահի պաշտոնն իր պաշտոնավարման ժամկետի ընթացքում

որեւէ պատճառով թափուր է մնում, ապա Կառավարիչների խորհուրդը նշանակում է նախագահի ժամանակավոր պաշտոնակատար կամ նոր նախագահ է ընտրում՝ սույն հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան:

3. Նախագահը նաեւ Տնօրենների խորհրդի նախագահն է, սակայն նա որեւէ ձայնի իրավունք չունի՝ բացառությամբ ձայների հավասար բաշխման դեպքում որոշիչ ձայնի իրավունքի: Նա կարող է մասնակցել Կառավարիչների խորհրդի նիստերին, սակայն չպետք է քվեարկի:

4. Նախագահը Բանկի իրավական ներկայացուցիչն է: Նա Բանկի աշխատակազմի ղեկավարն է եւ Կառավարիչների խորհրդի ղեկավարությամբ իրականացնում է Բանկի ընթացիկ գործունեությունը:

Հոդված 30. Բանկի պաշտոնատար անձինք եւ աշխատակազմը

1. Նախագահի առաջարկությամբ Տնօրենների խորհուրդը նշանակում է մեկ կամ ավելի փոխնախագահների՝ բաց, թափանցիկ գործընթացների հիման վրա եւ հաշվի առնելով անձի անհատական արժանիքները: Փոխնախագահը պաշտոնավարում է Տնօրենների խորհրդի կողմից սահմանված ժամկետով, Բանկի կառավարման շրջանակներում իրականացնում է Տնօրենների խորհրդի կողմից սահմանված լիազորությունները եւ գործառույթները: Նախագահի բացակայության կամ անաշխատունակության դեպքում Նախագահի լիազորություններն ստանձնում եւ գործառույթներն իրականացնում է փոխնախագահը:

2. Նախագահը պատասխանատու է Տնօրենների խորհրդի կողմից ընդունված կանոնակարգերին համապատասխան պաշտոնատար անձանց եւ աշխատակազմի կազմակերպման, նշանակման ու աշխատանքից ազատման համար՝ բացառությամբ փոխնախագահների՝ վերոնշյալ 1-ին պարբերությամբ նախատեսված սահմաններում:

3. Պաշտոնատար անձանց ու աշխատակիցներին նշանակելիս եւ փոխնախագահի առաջադրելիս Նախագահը, արդյունավետության եւ

տեխնիկական պատրաստվածության բարձրագույն չափանիշներն ապահովելու բացառիկ կարելիությամբ պայմանավորված, պատշաճ ուշադրություն է դարձնում անձնակազմի համալրմանը՝ հնարավորինս լայն տարածաշրջանային աշխարհագրական հիմքով:

Հոդված 31. Բանկի միջազգային բնույթը

1. Բանկը չի ընդունում Հատուկ ֆոնդեր, վարկեր կամ աջակցություն, որը որեւէ կերպ կարող է վտանգել, սահմանափակել, շեղել կամ որեւէ այլ կերպ փոխել նրա նպատակն ու գործառույթները:

2. Բանկը, դրա Նախագահը, պաշտոնատար անձինք եւ աշխատակազմը չպետք է միջամտեն որեւէ անդամի քաղաքական գործերին, ինչպես նաեւ իրենց որոշումներում չպետք է կրեն տվյալ անդամի քաղաքական բնույթից բխող ազդեցությունը: Նրանց որոշումները կայացվում են միայն տնտեսական նկատառումներից ելնելով: Այդպիսի նկատառումները գնահատվում են անկողմնակալ ձեւով՝ Բանկի նպատակին հասնելու եւ գործառույթներն իրականացնելու նպատակով:

3. Բանկի Նախագահը, պաշտոնատար անձինք եւ աշխատակիցներն իրենց պաշտոններից ազատվելու դեպքում պարտականություններ ունեն բացառապես Բանկի եւ ոչ մի այլ մարմնի առջեւ: Բանկի յուրաքանչյուր անդամ հարգում է այդ պարտականության միջազգային բնույթը եւ զերծ է մնում նրանց պարտականությունները կատարելիս նրանցից որեւէ մեկի վրա ազդելու բոլոր փորձերից:

ԳԼՈՒԽ VI

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 32. Բանկի գրասենյակները

1. Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Պեկինում՝ Չինաստանի

Ժողովրդական Հանրապետությունում:

2. Բանկը կարող է ստեղծել գործակալություններ կամ գրասենյակներ ցանկացած այլ վայրում:

Հոդված 33. Հաղորդակցության ուղին. Դեպոզիտարիաները

1. Յուրաքանչյուր անդամ նշանակում է համապատասխան պաշտոնական մարմին, որի հետ Բանկը կարող է կապ հաստատել սույն համաձայնագրի շրջանակներում ծագող ցանկացած հարցի առնչությամբ:

2. Յուրաքանչյուր անդամ նշանակում է իր կենտրոնական բանկը կամ Բանկի հետ համաձայնեցված այդպիսի այլ հաստատություն՝ որպես դեպոզիտարիա, որտեղ Բանկը կարող է պահել տվյալ անդամի արժույթային ռեզերվները, ինչպես նաեւ Բանկի այլ ակտիվներ:

3. Բանկը կարող է իր ակտիվները պահել այնպիսի դեպոզիտարիաներում, որոնք որոշվում են Տնօրենների խորհրդի կողմից:

Հոդված 34. Զեկույցները եւ տեղեկությունները

1. Բանկի աշխատանքային լեզուն անգլերենն է, եւ Բանկը բոլոր որոշումների եւ 54-րդ հոդվածի համաձայն մեկնաբանությունների առնչությամբ առաջնորդվում է սույն համաձայնագրի անգլերեն տեքստով:

2. Անդամները Բանկին ապահովում են այնպիսի տեղեկություններով, որոնք այն կարող է խելամտության սահմաններում նրանցից պահանջել՝ իր գործառույթների իրականացումը խթանելու նպատակով:

3. Բանկն իր անդամներին փոխանցում է հաշիվների վերաբերյալ աուդիտի ենթարկված հաշվետվություն պարունակող տարեկան զեկույց եւ հրապարակում է այդ զեկույցը: Այն նաեւ եռամսյակային կտրվածքով իր անդամներին է ներկայացնում իր ֆինանսական դրության մասին հակիրճ հաշվետվություն, ինչպես նաեւ շահույթի եւ վնասի վերաբերյալ հաշվետվություն, որն արտացոլում է իր գործառնությունների արդյունքները:

4. Բանկն իր գործառնություններում թափանցիկությունը բարձրացնելու նպատակով սահմանում է տեղեկությունների հրապարակման վերաբերյալ քաղաքականություն: Բանկը կարող է հրապարակել այդպիսի զեկույցներ՝ իր նպատակն ու գործառույթներն իրականացնելու համար դա նպատակահարմար համարելու դեպքում:

Հոդված 35. Անդամների եւ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը

1. Բանկն իր գործունեությունն իրականացնում է՝ սերտ համագործակցելով իր բոլոր անդամների, ինչպես նաեւ այլ միջազգային ֆինանսական հաստատությունների եւ տարածաշրջանի տնտեսական զարգացման կամ Բանկի գործառնական ոլորտների հետ առնչվող միջազգային կազմակերպությունների հետ՝ այն եղանակով, որը նպատակահարմար է համարում սույն համաձայնագրի շրջանակներում:

2. Բանկը սույն համաձայնագրին համահունչ նպատակներով, Տնօրենների խորհրդի հաստատմամբ կարող է պայմանավորվածություններ ձեռք բերել այդպիսի կազմակերպությունների հետ:

Հոդված 36. Հղումները

1. Սույն համաձայնագրում հոդվածին կամ հավելվածին արված հղումները վերաբերում են սույն համաձայնագրի հոդվածներին եւ հավելվածներին, եթե այլ բան սահմանված չէ:

2. Սույն համաձայնագրում որոշակի սեռին կատարված հղումները հավասարապես կիրառելի են ցանկացած սեռի նկատմամբ:

ԳԼՈՒԽ VII

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

Հոդված 37. Անդամակցությունից դուրս գալը

1. Ցանկացած անդամ կարող է ցանկացած պահի դուրս գալ Բանկի անդամակցությունից՝ Բանկին դրա գլխավոր գրասենյակ գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

2. Անդամի կողմից անդամակցությունից դուրս գալն ուժի մեջ է մտնում, եւ նրա անդամակցությունը դադարում է նրա ծանուցման մեջ նշված օրը, սակայն ոչ մի պարագայում ոչ ավելի շուտ, քան Բանկի կողմից այդ ծանուցումն ստանալու օրվանից վեց (6) ամիս հետո: Սակայն ցանկացած պահի՝ նախքան անդամակցությունից դուրս գալը վերջնական ուժի մեջ մտնելը, անդամը կարող է Բանկին գրավոր ծանուցել անդամակցությունից դուրս գալու մտադրության մասին իր ծանուցումը չեղարկելու վերաբերյալ:

3. Անդամակցությունից դուրս եկող անդամը շարունակում է պատասխանատու լինել Բանկի առջեւ բոլոր այն ուղղակի կամ պայմանական պարտավորությունների մասով, որոնք նա ունեցել է անդամակցությունից դուրս գալու մասին ծանուցումն ուղարկելու օրվա դրությամբ: Ծանուցումը վերջնական ուժի մեջ մտնելու դեպքում անդամը որեւէ պատասխանատվություն չի կրում անդամակցությունից դուրս գալու մասին ծանուցումը Բանկի կողմից ստանալու օրվանից հետո կատարված՝ Բանկի գործառնություններից բխող պարտավորությունների համար:

Հոդված 38. Անդամակցության կասեցումը

1. Եթե անդամը չի կատարում Բանկի առջեւ ունեցած իր որեւէ պարտավորություն, ապա Կառավարիչների խորհուրդը ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով, կարող է կասեցնել

նրա անդամակցությունը:

2. Այն անդամը, որի անդամակցությունն այդպես կասեցվել է, ինքնաբերաբար դադարում է լինել անդամ՝ կասեցման օրվանից մեկ (1) տարի տետողությամբ, եթե Կառավարիչների խորհուրդը ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով, չի որոշում վերականգնել անդամի համապատասխան կարգավիճակը:

3. Քանի դեռ անդամակցությունը կասեցված է, անդամն իրավասու չէ իրականացնելու սույն համաձայնագրով նախատեսված իրավունքները՝ բացառությամբ անդամակցությունից դուրս գալու իրավունքի, սակայն շարունակում է պատասխանատու լինել իր բոլոր պարտավորությունների համար:

Հոդված 39. Հաշվանցումը

1. Երկրի անդամակցությունը դադարելու օրվանից հետո այն շարունակում է պատասխանատու լինել Բանկի առջեւ իր ունեցած ուղղակի պարտավորությունների եւ պայմանական պարտավորությունների համար այնքան ժամանակ, քանի դեռ չի վճարվել վարկերի, երաշխիքների, կապիտալում ներդրումների կամ 11-րդ հոդվածի 2 (vi) պարբերությամբ նախատեսված ֆինանսավորման այլ ձեւերի (այսուհետ՝ այլ ֆինանսավորում) ցանկացած մաս, որի վերաբերյալ պայմանագիր էր կնքվել նախքան իր անդամակցությունը դադարեցնելը, սակայն այն պատասխանատվություն չի կրում Բանկի կողմից դրանից հետո կնքված՝ վարկերի, երաշխիքների, կապիտալում ներդրումների կամ այլ ֆինանսավորման հետ կապված գործարքների մասով կամ Բանկի եկամուտին կամ ծախսերին մասնակցության մասով:

2. Երկրի անդամակցությունը դադարելու պահից Բանկը միջոցներ է ձեռնարկում Բանկի կողմից այդ երկրի բաժնետոմսերի հետգնման համար՝ որպես այդ երկրի հետ հաշվանցման մաս՝ սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ պարբերությունների դրույթներին համապատասխան: Այդ նպատակով բաժնետոմսերի հետգնման գինը երկրի անդամակցությունը դադարելու օրվա դրությամբ Բանկային

գրքույկներում ներկայացված գինն է:

3. Սույն հոդվածի համաձայն՝ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսերի համար վճարումը կարգավորվում է հետեւյալ պայմաններով.

- i) Դրա բաժնետոմսերի համար երկրին վճարման ենթակա ցանկացած գումար պահվում է այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկիրը, դրա կենտրոնական բանկը կամ դրա ցանկացած գործակալություն, հաստատություն կամ քաղաքական ստորաբաժանում շարունակում է կապիտալում ներդրումների կամ այլ ֆինանսավորման մասով Բանկի առջեւ պատասխանատու լինել որպես փոխառու, երաշխավոր կամ այլ պայմանավորվող կողմ, եւ այդ գումարը Բանկի հայեցողությամբ կարող է կիրառվել ցանկացած այդպիսի պարտավորության նկատմամբ՝ դրա վճարման ժամկետը լրանալու դեպքում: Բաժնետոմսերի համար բաժանորդագրության կապակցությամբ 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան հետագա պահանջների մասով երկրի պայմանական պարտավորության առնչությամբ որեւէ գումար չի պահվում: Ցանկացած դեպքում դրա բաժնետոմսերի համար անդամին վճարման ենթակա որեւէ գումար չի վճարվում՝ նախքան այդ երկրի անդամակցությունը դադարելու օրվանից հետո վեց (6) ամիսը լրանալը:
- ii) Բաժնետոմսերի համար վճարումները կարող են կատարվել պարբերաբար՝ տվյալ երկրի կողմից բաժնետոմսերի համապատասխան հավաստագրերը փոխանցելուց հետո՝ այն չափով, որով սույն հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան հետգնման գնին համարժեք վճարման ենթակա գումարը գերազանցում է սույն պարբերության (i) ենթապարբերությունում նշված վարկերի, երաշխիքների, կապիտալում ներդրումների եւ այլ ֆինանսավորման համար պարտավորությունների ընդհանուր ծավալը, քանի դեռ նախկին անդամը չի ստացել հետգնման ամբողջ գումարը:

- iii) Վճարումները կատարվում են այն հասանելի արժույթներով, որոնք որոշում է Բանկը՝ հաշվի առնելով դրա ֆինանսական դրությունը:
- iv) Եթե Բանկը կորուստներ է կրում ցանկացած վարկի, երաշխիքի, կապիտալում ներդրման կամ այլ ֆինանսավորման մասով, որոնք երկրի անդամակցությունը դադարելու օրվա դրությամբ վճարված չեն եղել, եւ այդպիսի կորուստների գումարը գերազանցում է այդ օրվա դրությամբ կորուստների պահուստի գումարը, ապա տվյալ երկիրը, ըստ պահանջի, հետ է վճարում այն գումարը, որով իր բաժնետոմսերի հետգնման գինը նվազած կլիներ, եթե հետգնման գինը որոշելիս կորուստները հաշվի առնվեին: Բացի այդ, նախկին անդամը շարունակում է պատասխանատու լինել չվճարված բաժանորդագրությունների կապակցությամբ 6-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան ցանկացած պահանջի համար այն նույն ծավալով, որը կպահանջվեր վճարել, եթե կապիտալի արժեզրկումը տեղի ունեցած լիներ, եւ պահանջը ներկայացված լիներ դրա բաժնետոմսերի հետգնման գինը որոշելու պահին:

4. Եթե Բանկը 41-րդ հոդվածի համաձայն դադարեցնում է իր գործառնությունները ցանկացած երկրի անդամակցությունը դադարելու օրվանից վեց (6) ամսվա ընթացքում, ապա տվյալ երկրի բոլոր իրավունքները որոշվում են 41-43-րդ հոդվածների դրույթներին համապատասխան: Այդ երկիրը դեռեւս անդամ է համարվում այդ հոդվածների նպատակներով, սակայն չի ունենում որեւէ ձայնի իրավունք:

ԳԼՈՒԽ VIII

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված 40. Գործառնությունների ժամանակավոր կասեցումը

Արտակարգ իրավիճակի դեպքում Տնօրենների խորհուրդը կարող է ժամանակավորապես կասեցնել նոր վարկերի, երաշխիքների, կապիտալում ներդրումների եւ 11-րդ հոդվածի 2 (vi) ենթապարբերությամբ նախատեսված ֆինանսավորման այլ ձեւերի հետ կապված գործառնությունները՝ մինչեւ Կառավարիչների խորհրդի կողմից այդ հարցի հետագա ուսումնասիրումն ու դրա առնչությամբ քայլերի ձեռնարկումը:

Հոդված 41. Գործառնությունների դադարեցումը

1. Բանկը կարող է դադարեցնել իր գործառնությունները Կառավարիչների խորհրդի որոշմամբ, որը հաստատվում է ծայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

2. Այդպիսի դադարեցումից հետո Բանկն անմիջապես դադարեցնում է բոլոր գործողությունները՝ բացառությամբ այն գործողությունների, որոնք կապված են դրա ակտիվների՝ կարգավորված ձեւով իրացման, կոնսերվացման ու պահպանման, ինչպես նաեւ իր պարտավորությունների կատարման հետ:

Հոդված 42. Անդամների պարտավորությունները եւ պահանջների համար վճարումները

1. Բանկի գործունեության դադարեցման դեպքում Բանկի կանոնադրական կապիտալին այն բաժանորդագրությունների մասով, որոնց վերաբերյալ պահանջ չի ներկայացվել, եւ նրանց արժույթների արժեզրկման մասով բոլոր անդամների պարտավորությունները շարունակվում են, քանի դեռ չեն բավարարվել բոլոր պարտատերերի պահանջները, այդ թվում՝ պայմանական պահանջները:

2. Ուղղակի պահանջներ ունեցող բոլոր պարտատերերը նախ վճարվում են Բանկի ակտիվներից, իսկ ապա՝ Բանկային վճարումներից կամ բաժանորդագրությամբ ձեռք բերված չվճարված կամ ցպահանջ վճարման ենթակա բաժանորդագրություններից: Նախքան ուղղակի պահանջներ ունեցող բոլոր պարտատերերին վճարելը Տնօրենների խորհուրդը ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք իր գնահատմամբ անհրաժեշտ են ուղղակի եւ պայմանական պահանջներ ունեցող անդամների միջեւ համամասնական բաշխում ապահովելու նպատակով:

Հոդված 43. Ակտիվների բաշխումը

1. Բանկի կանոնադրական կապիտալին նրանց բաժանորդագրությունների կապակցությամբ ակտիվների բաշխում անդամներին չի կատարվում, քանի դեռ՝

- i) պարտատերերի առջեւ ունեցած բոլոր պարտավորությունները չեն կատարվել կամ ապահովվել, եւ
- ii) Կառավարիչների խորհուրդը ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով, չի որոշել այդպիսի բաշխում կատարել:

2. Բանկի ակտիվների ցանկացած բաշխում համամասնական է յուրաքանչյուր անդամի կողմից կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը եւ իրականացվում է այն դեպքերում եւ այնպիսի պայմաններով, որոնք Բանկն արդարացի եւ համաչափ է համարում: Բաշխված ակտիվներում բաժնեմասերի միատեսակ լինելը, ըստ ակտիվի տեսակի, պարտադիր չէ: Որեւէ անդամ իրավունք չունի ստանալու իր բաժնեմասն ակտիվների այդ բաշխման արդյունքում, քանի դեռ չի մարել Բանկի առջեւ ունեցած իր բոլոր պարտավորությունները:

3. Սույն հոդվածի համաձայն բաշխված ակտիվներ ստացող ցանկացած անդամ այդ ակտիվների մասով ունի նույն իրավունքները, որոնք ունեցել է Բանկը՝

նախքան դրանց բաշխումը:

ԳԼՈՒԽ IX

ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հոդված 44. Գլխի նպատակները

1. Բանկին՝ իր նպատակներին հասնելու եւ իրեն վստահված գործառույթներն իրականացնելու հնարավորություն տալու նպատակով սույն գլխում ներկայացված կարգավիճակը, անձեռնմխելիությունը, արտոնությունները եւ բացառումները Բանկի համար ապահովվում են յուրաքանչյուր անդամի տարածքում:

2. Յուրաքանչյուր անդամ անհապաղ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ սույն գլխում ներկայացված դրույթներն իր տարածքում գործողության մեջ դնելու նպատակով, եւ Բանկին տեղեկացնում է իր ձեռնարկած գործողությունների մասին:

Հոդված 45. Բանկի կարգավիճակը

Բանկն ունի լիարժեք իրավասությունները եւ, մասնավորապես, լիարժեք իրավունակություն՝

- i) կնքելու պայմանագրեր,
- ii) ձեռք բերելու եւ տնօրինելու անշարժ ու շարժական գույք,
- iii) նախաձեռնելու իրավական ընթացակարգեր եւ դրանց արձագանքելու,
- iv) ձեռնարկելու իր նպատակներին հասնելու եւ գործունեության իրականացման համար անհրաժեշտ ու օգտակար այլ գործողություններ:

Հոդված 46. Դատական վարույթների նկատմամբ անձեռնմխելիությունը

1. Բանկն անձեռնմխելի է ցանկացած տեսակի իրավական գործընթացների նկատմամբ՝ բացառությամբ փոխառությունների միջոցով կամ այլ եղանակով ֆինանսական միջոցներ ներգրավելու, պարտավորությունները երաշխավորելու կամ արժեթղթեր վաճառելու ու գնելու կամ դրանց անդերռայթինգ իրականացնելու հետ կապված իր լիազորություններից բխող կամ դրանց առնչվող դեպքերի, որոնց պարագայում ընդդեմ Բանկի հայց կարող է ներկայացվել միայն այն երկրի տարածքում գտնվող իրավասու դատարանում, որտեղ Բանկն ունի գրասենյակ, կամ որտեղ Բանկը նշանակել է գործակալ՝ դատավարության մասին ծանուցում կամ ծանուցագիր ստանալու նպատակով, կամ թողարկել է արժեթղթեր կամ երաշխավորել դրանք:

2. Չհակասելով սույն հոդվածի 1-ին պարբերության դրույթներին՝ ընդդեմ Բանկի հայց չի կարող ներկայացվել որեւէ անդամի կամ անդամի որեւէ գործակալության կամ հաստատության, կամ ցանկացած սուբյեկտի կամ անձի կողմից, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գործում է կամ պահանջներ է ներկայացնում անդամի կամ անդամի որեւէ գործակալության կամ հաստատության անունից: Անդամները Բանկի եւ դրա անդամների միջեւ վեճերի լուծման համար օգտվում են սույն համաձայնագրում, Բանկի ներքին իրավական ակտերում եւ կանոնակարգերում կամ Բանկի հետ կնքված պայմանագրերում սահմանված հատուկ ընթացակարգերից:

3. Բանկի գույքն ու ակտիվները՝ անկախ դրանց գտնվելու վայրից եւ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, անձեռնմխելի են առգրավման, արգելադրման կամ կատարման բոլոր ձեւերի նկատմամբ՝ նախքան Բանկի դեմ վերջնական դատական ակտ կայացվելը:

Հոդված 47. Ակտիվների եւ արխիվների անձեռնմխելիությունը

1. Բանկի գույքն ու ակտիվները՝ անկախ դրանց գտնվելու վայրից եւ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, անձեռնմխելի են խուզարկության, ռեկվիզիցիայի, բռնագանձման, էքսպրոպրիացիայի կամ կատարողական կամ օրենսդրական գործողությունների միջոցով վերցնելու կամ բռնագանձման

ցանկացած այլ ձեւի նկատմամբ:

2. Բանկի արխիվները եւ, առհասարակ, դրան պատկանող կամ դրանում պահվող բոլոր փաստաթղթերն անձեռնմխելի են՝ անկախ դրանց գտնվելու վայրից եւ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում:

Հոդված 48. Ակտիվների՝ սահմանափակումներից զերծ լինելը

Բանկի ամբողջ գույքն ու ակտիվները զերծ են ամեն տեսակի սահմանափակումներից, կարգավորումներից, հսկողությունից եւ մորատորիումից այնքանով, որքանով դա անհրաժեշտ է Բանկի նպատակներին հասնելու եւ գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու համար, ինչպես նաեւ հաշվի առնելով սույն համաձայնագրի դրույթները:

Հոդված 49. Հաղորդակցության հետ կապված արտոնությունը

Յուրաքանչյուր անդամի կողմից Բանկի պաշտոնական հաղորդակցության համար ապահովվում են նույնպիսի պայմաններ, ինչպիսիք ապահովվում են ցանկացած այլ անդամի պաշտոնական հաղորդակցության համար:

Հոդված 50. Պաշտոնատար անձանց եւ աշխատողների անձեռնմխելիությունն ու արտոնությունները

Բանկի բոլոր կառավարիչները, տնօրենները, նրանց տեղակալները, Նախագահը, փոխնախագահները եւ մյուս պաշտոնատար անձինք ու աշխատողները, այդ թվում՝ Բանկի համար հանձնարարություններ կատարող կամ ծառայություններ մատուցող փորձագետներն ու խորհրդատուները՝

- i) անձեռնմխելի են ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրականացված գործողությունների հետ կապված դատական գործընթացների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը հրաժարվում է անձեռնմխելիությունից, ինչպես նաեւ օգտվում են իրենց բոլոր պաշտոնական փաստաթղթերի եւ արձանագրությունների անձեռնմխելիությունից.

- ii) եթե նրանք տեղի քաղաքացի չեն, ապա նրանց տրամադրվում են ներգաղթի սահմանափակումների, օտարերկրացիների գրանցման վերաբերյալ պահանջների ու պետական ծառայության հետ կապված պարտավորությունների մասով այն նույն անձեռնմխելիությունը, ինչպես նաեւ տարադրամի փոխանակման հետ կապված կանոնակարգերի մասով այն նույն հնարավորությունները, որոնք անդամների կողմից տրամադրվում են մյուս անդամների համանման կարգի ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց եւ աշխատողներին. եւ
- iii) ճամփորդելու հետ կապված հնարավորությունների առումով նրանց տրամադրվում են այն նույն պայմանները, որոնք անդամների կողմից տրամադրվում են մյուս անդամների համանման կարգի ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց եւ աշխատողներին:

Հոդված 51. Հարկումից ազատումը

1. Բանկը, դրա ակտիվները, գույքը, եկամուտը եւ սույն համաձայնագրի համաձայն դրա գործառնություններն ու գործարքներն ազատ են բոլոր տեսակի հարկերից եւ բոլոր տեսակի մաքսատուրքերից: Բանկը նաեւ ազատվում է ցանկացած հարկի կամ տուրքի վճարման, պահման կամ հավաքման պարտավորությունից:

2. Բանկի կողմից Բանկի տնօրեններին, փոխտնօրեններին, Նախագահին, փոխնախագահներին եւ մյուս պաշտոնատար անձանց կամ աշխատողներին, այդ թվում՝ Բանկի համար հանձնարարություններ կատարող կամ ծառայություններ մատուցող փորձագետներին ու խորհրդատուներին որոշակի հանգամանքներում վճարվող աշխատավարձի, պարգեատրումների եւ ծախսերի մասով որեւէ տեսակի հարկ չի գանձվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անդամը վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու մասին փաստաթղթի հետ մեկտեղ կարող է ի պահ հանձնել հայտարարություն այն մասին, որ նշված անդամն իրեն եւ իր քաղաքական ստորաբաժանումներին վերապահում է այդ անդամի քաղաքացիներին Բանկի կողմից որոշակի հանգամանքներում վճարվող աշխատավարձից եւ

պարզեատրումներից հարկեր գանձելու իրավունքը:

3. Բանկի կողմից թողարկված որեւէ պարտատոմս կամ արժեթուղթ, այդ թվում՝ դրանցից ստացված ցանկացած շահութաբաժին կամ տոկոսագումար՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, որեւէ տեսակի այնպիսի հարկով չի հարկվում՝

- i) որով խտրականություն է դրվում այդ պարտատոմսի կամ արժեթղթի նկատմամբ միայն այն պատճառով, որ այն թողարկվել է Բանկի կողմից, կամ
- ii) եթե այդպիսի հարկման համար միակ իրավաբանական հիմքը դրա թողարկման վայրն է կամ այն արժույթը, որով այն թողարկվել է եւ ենթակա է վճարման կամ վճարվում է, կամ էլ Բանկին պատկանող որեւէ գրասենյակի գտնվելու վայրը կամ գործունեության իրականացման վայրը:

4. Բանկի կողմից երաշխավորված որեւէ պարտատոմս կամ արժեթուղթ, այդ թվում՝ դրանցից ստացված ցանկացած շահութաբաժին կամ տոկոսագումար՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, որեւէ տեսակի այնպիսի հարկով չի հարկվում՝

- i) որով խտրականություն է դրվում այդ պարտատոմսի կամ արժեթղթի նկատմամբ միայն այն պատճառով, որ այն երաշխավորվել է Բանկի կողմից, կամ
- ii) եթե այդպիսի հարկման համար միակ իրավաբանական հիմքը Բանկին պատկանող որեւէ գրասենյակի գտնվելու վայրը կամ գործունեության իրականացման վայրն է:

Հոդված 52. Իրավունքներից հրաժարվելը

1. Բանկն իր հայեցողությամբ, ցանկացած դեպքում կամ պարագայում կարող է հրաժարվել սույն գլխով վերապահված ցանկացած արտոնությունից,

անձեռնմխելիությունից եւ բացառումներից՝ այնպիսի եղանակով եւ այնպիսի պայմաններով, որոնք այն կարող է նպատակահարմար համարել՝ ելնելով Բանկի լավագույն շահերից:

ԳԼՈՒԽ X

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԲԻՏՐԱԺԸ

Հոդված 53. Փոփոխությունները

1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխությունների ենթարկվել միայն Կառավարիչների խորհրդի որոշմամբ, որը հաստատվել է ձայների գերակշռող մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով:

2. Չհակասելով սույն հոդվածի 1-ին պարբերության դրույթներին՝ Կառավարիչների խորհրդի միաձայն համաձայնությունն է պահանջվում այն փոփոխությունների հաստատման համար, որոնցով փոփոխվում են՝

- i) Բանկի անդամությունից դուրս գալու իրավունքը,
- ii) պարտավորությունների մասով սահմանափակումները՝ նախատեսված 7-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ պարբերություններում, եւ
- iii) կանոնադրական կապիտալում բաժնեմասի գնմանը վերաբերող իրավունքները՝ նախատեսված 5-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում:

3. Սույն համաձայնագիրը փոփոխելու ցանկացած առաջարկության մասին, որն արվում է Տնօրենների խորհրդի կամ որեւէ անդամի կողմից, տեղեկացվում է Կառավարիչների խորհրդի նախագահին, որն էլ առաջարկությունը ներկայացնում է Կառավարիչների խորհրդի քննարկմանը: Փոփոխությունն ընդունվելու դեպքում Բանկը դա հավաստում է բոլոր անդամներին հասցեագրված պաշտոնական հաղորդագրության միջոցով: Փոփոխությունները բոլոր

անդամների համար ուժի մեջ են մտնում պաշտոնական ծանուցման օրվանից երեք (3) ամիս հետո, եթե դրա մեջ Կառավարիչների խորհուրդն այլ ժամկետ չի սահմանում:

Հոդված 54. Մեկնաբանությունը

1. Որեւէ անդամի եւ Բանկի, կամ Բանկի երկու կամ ավելի անդամների միջեւ սույն համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ առաջացած ցանկացած հարց ներկայացվում է Տնօրենների խորհուրդ՝ դրա վերաբերյալ որոշում կայացնելու համար: Եթե Խորհրդի կազմում տվյալ երկրի քաղաքացիությունն ունեցող որեւէ տնօրեն չկա, ապա այն անդամը, որի վրա հատկապես ազդեցություն ունի քննարկվող հարցը, այդպիսի քննարկման ընթացքում Տնօրենների խորհրդում ունի ուղղակի ներկայացուցչության իրավունք. այդ անդամի ներկայացուցիչը, սակայն, ձայնի իրավունք չունի: Ներկայացուցչության այդպիսի իրավունքը կարգավորվում է Կառավարիչների խորհրդի կողմից:

2. Ցանկացած դեպքում, երբ Տնօրենների խորհուրդը որոշում է ընդունել սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն, ցանկացած անդամ կարող է պահանջել, որ հարցը փոխանցվի Կառավարիչների խորհրդին, որի որոշումը վերջնական է: Նախքան Կառավարիչների խորհրդի կողմից որոշում կայացնելը Բանկն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ կհամարի, կարող է գործել Տնօրենների խորհրդի որոշման հիման վրա:

Հոդված 55. Արբիտրաժը

Բանկի եւ անդամակցությունը դադարեցրած երկրի միջեւ, կամ Բանկի գործունեությունը դադարեցնելու մասին որոշում ընդունելուց հետո Բանկի եւ ցանկացած անդամի միջեւ տարաձայնություն առաջանալու դեպքում այդ տարաձայնությունը ներկայացվում է երեք արբիտրներից բաղկացած տրիբունալի արբիտրաժային քննությանը: Արբիտրներից մեկը նշանակվում է Բանկի կողմից,

մյուսը՝ տվյալ երկրի կողմից, իսկ երրորդը, եթե կողմերն այլ համաձայնության չեն եկել, Արդարադատության միջազգային դատարանի նախագահի կամ այդպիսի այլ մարմնի կողմից, ինչպես կարող է սահմանվել Կառավարիչների խորհրդի կողմից ընդունված կանոնակարգերով: Արբիտրների ծայների մեծամասնությունը բավարար է որոշում կայացնելու համար, որը կլինի վերջնական եւ կողմերի համար պարտադիր: Երրորդ արբիտրն իրավասու է լուծելու ընթացակարգային հարցեր ցանկացած դեպքում, երբ կողմերն այդ հարցով տարաձայնություն ունեն:

Հոդված 56. Համաձայնություն տալու կանխավարկածը

Ցանկացած դեպքում, երբ նախքան Բանկի կողմից որեւէ գործողություն կատարելը պահանջվում է որեւէ անդամի համաձայնությունը՝ բացառությամբ 53-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերի, համաձայնությունը համարվում է տրված, եթե անդամն առարկություն չի ներկայացնում այնպիսի ողջամիտ ժամկետում, որը Բանկը կարող է սահմանել առաջարկված գործողության մասին անդամին ծանուցելիս:

ԳԼՈՒԽ XI

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 57. Ստորագրելն ու ի պահ հանձնելը

1. Սույն համաձայնագիրը, որն ի պահ է հանձնվել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությանը (այսուհետ՝ ավանդապահ), մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը բաց է այն երկրների կառավարությունների կողմից ստորագրման համար, որոնց անունները ներկայացված են Ա հավելվածում:

2. Ավանդապահը սույն համաձայնագրի հաստատված պատճեններն ուղարկում է ստորագրող բոլոր կողմերին եւ այլ երկրների, որոնք դառնում են

Բանկի անդամ:

Հոդված 58. Վավերացումը, ընդունումը կամ հաստատումը

1. Սույն համաձայնագիրը ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման այն ստորագրող կողմերի կողմից: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին 2016 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ կամ անհրաժեշտության դեպքում մինչև դրանից ավելի ուշ որեւէ օր, որը կարող է որոշվել Կառավարիչների խորհրդի կողմից՝ ձայների հատուկ մեծամասնությամբ, ինչպես նախատեսված է 28-րդ հոդվածով: Ավանդապահը պատշաճ կերպով ծանուցում է մյուս ստորագրող կողմերին յուրաքանչյուր ի պահ հանձնման եւ դրա ամսաթվի մասին:

2. Այն ստորագրող կողմը, որի վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ է հանձնվում նախքան սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը, Բանկի անդամ է դառնում այդ ամսաթվին: Ցանկացած այլ ստորագրող կողմ, որը կատարել է նախորդ պարբերության դրույթները, Բանկի անդամ է դառնում այն ամսաթվին, երբ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ է հանձնվում:

Հոդված 59. Ուժի մեջ մտնելը

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում, երբ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում առնվազն տասը (10) ստորագրող կողմի կողմից, որոնց նախնական բաժանորդագրությունները, ինչպես սահմանված է սույն համաձայնագրի Ա հավելվածում, ընդհանուր առմամբ կազմում են ոչ պակաս, քան այդպիսի բաժանորդագրությունների ընդհանուրի հիսուն (50) տոկոսը:

Հոդված 60. Մեկնարկային նիստը եւ գործառնությունների սկիզբը

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից յուրաքանչյուր անդամ նշանակում է կառավարիչ, իսկ ավանդապահը հրավիրում է Կառավարիչների խորհրդի մեկնարկային նիստ:

2. Մեկնարկային նիստի ժամանակ Կառավարիչների խորհուրդը՝

i) ընտրում է Նախագահ.

ii) 25-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան ընտրում է Բանկի տնօրեններին՝ պայմանով, որ Կառավարիչների խորհուրդը կարող է որոշում կայացնել երկու տարուց ավելի կարճ սկզբնական ժամանակահատվածի համար ավելի քիչ թվով տնօրեններ ընտրելու վերաբերյալ՝ հաշվի առնելով անդամների եւ այն ստորագրող կողմերի թիվը, որոնք դեռեւս անդամ չեն դարձել.

iii) միջոցներ է ձեռնարկում՝ որոշելու համար այն ամսաթիվը, երբ Բանկը պետք է սկսի իր գործառնությունները. եւ

iv) անհրաժեշտության դեպքում ձեռնարկում է այդպիսի այլ միջոցներ՝ Բանկի գործառնությունների սկիզբը նախապատրաստելու նպատակով:

3. Բանկը ծանուցում է իր անդամներին իր գործառնություններն սկսելու ամսաթվի մասին:

Կատարված է Պեկինում՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում, 2015 թվականի հունիսի 29-ին, մեկ բնօրինակով, որն ի պահ է հանձնվել ավանդապահի արխիվներ, եւ որի անգլերեն, չինարեն ու ֆրանսերեն տեքստերը նույնական են:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

**Հայտարարված կանոնադրական կապիտալում նախնական
բաժանորդագրություններն այն երկրների համար, որոնք կարող են անդամ
դառնալ՝ 58-րդ հոդվածին համապատասխան**

	Բաժնետոմսերի թիվը	Կապիտալի բաժնետոմսերին բաժանորդագրությունը (մլն \$)
ՄԱՍ Ա.		
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ		
Ավստրալիա	36 912	3 691.2
Ադրբեջան	2 541	254.1
Բանգլադեշ	6 605	660.5
Բրունեյ Դարուսսալամ	524	52.4
Կամբոջա	623	62.3
Չինաստան	297 804	29 780.4
Վրաստան	539	53.9
Հնդկաստան	83 673	8 367.3
Ինդոնեզիա	33 607	3 360.7
Իրան	15 808	1 580.8
Իսրայել	7 499	749.9
Հորդանան	1 192	119.2
Ղազախստան	7 293	729.3
Կորեա	37 388	3 738.8
Քուվեյթ	5 360	536.0
Ղրղզստանի Հանրապետություն	268	26.8

Լաոսի	430	43.0
Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն		
Մալայզիա	1 095	109.5
Մալդիվներ	72	7.2
Մոնղոլիա	411	41.1
Բիրմա	2 645	264.5
Նեպալ	809	80.9
Նոր Զելանդիա	4 615	461.5
Օման	2 592	259.2
Պակիստան	10 341	1 034.1
Ֆիլիպիններ	9 791	979.1
Քաթար	6 044	604.4
Ռուսաստան	65 362	6 536.2
Սաուդյան Արաբիա	25 446	2 544.6
Սինգապուր	2 500	250.0
Շրի Լանկա	2 690	269.0
Տաջիկստան	309	30.9
Թաիլանդ	14 275	1 427.5
Թուրքիա	26 099	2 609.9
Արաբական Միացյալ Էմիրություններ	11 857	1 185.7
Ուզբեկստան	2 198	219.8
Վիետնամ	6 633	663.3
Չոնդաբաշխված	16 150	1 615.0
ԸՆԴԱՄԵՆԸ	750 000	75 000.0

ՄԱՍ Բ.**ՈՉ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՆԴԱՄՆԵՐ**

Ավստրիա	5 008	500.8
Բրազիլիա	31 810	3 181.0
Դանիա	3 695	369.5
Եգիպտոս	6 505	650.5
Ֆինլանդիա	3 103	310.3
Ֆրանսիա	33 756	3 375.6
Գերմանիա	44 842	4 484.2
Իսլանդիա	176	17.6
Իտալիա	25 718	2 571.8
Լյուքսեմբուրգ	697	69.7
Մալթա	136	13.6
Նիդեռլանդներ	10 313	1 031.3
Նորվեգիա	5 506	550.6
Լեհաստան	8 318	831.8
Պորտուգալիա	650	65.0
Հարավաֆրիկյան Հանրապետություն	5 905	590.5
Իսպանիա	17 615	1 761.5
Շվեդիա	6 300	630.0
Շվեյցարիա	7 064	706.4
Միացյալ Թագավորություն	30 547	3 054.7
Չտեղաբաշխված	2 336	233.6
ԸՆԴԱՄՆԸ	250 000	25 000.0
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ	1 000 000	100 000.0

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարիչների խորհուրդը սահմանում է կանոններ տնօրենների յուրաքանչյուր ընտրություն անցկացնելու վերաբերյալ՝ հետեւյալ դրույթներին համապատասխան:

1. Ընտրաշրջանը. Յուրաքանչյուր տնօրեն ներկայացնում է մեկ ընտրաշրջանում մեկ կամ մի քանի անդամի: Յուրաքանչյուր ընտրաշրջանի համար ձայների ընդհանուր թիվը բաղկացած է այն ձայներից, որոնցով տնօրենն իրավունք ունի քվեարկելու՝ 28-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն:

2. Ընտրաշրջանի ձայների թիվը. Յուրաքանչյուր ընտրության ժամանակ Կառավարիչների խորհուրդը տոկոսային նվազագույն սահմանաչափ է սահմանում տարածաշրջանային անդամներին ներկայացնող կառավարիչների կողմից ընտրվող տնօրենների (տարածաշրջանային տնօրեններ) մասով ընտրաշրջանի ձայների թվի համար եւ տոկոսային նվազագույն սահմանաչափ՝ ոչ տարածաշրջանային անդամներին ներկայացնող կառավարիչների կողմից ընտրվող տնօրենների (ոչ տարածաշրջանային տնօրեններ) մասով ընտրաշրջանի ձայների թվի համար:

ա) Նվազագույն տոկոսային սահմանաչափը տարածաշրջանային տնօրենների համար սահմանվում է տարածաշրջանային անդամներին ներկայացնող կառավարիչների (տարածաշրջանային կառավարիչներ) կողմից ընտրությանը քվեարկելու համար իրավունք տվող ձայների ընդհանուր թվի նկատմամբ տոկոսային չափով: Նախնական նվազագույն տոկոսային սահմանաչափը տարածաշրջանային տնօրենների համար 6 տոկոս է:

բ) Նվազագույն տոկոսային սահմանաչափը ոչ տարածաշրջանային տնօրենների համար սահմանվում է ոչ տարածաշրջանային անդամներին ներկայացնող կառավարիչների (ոչ տարածաշրջանային

կառավարիչներ) կողմից ընտրությանը քվեարկելու համար իրավունք տվող ձայների ընդհանուր թվի նկատմամբ տոկոսային չափով: Նախնական նվազագույն տոկոսային սահմանաչափը ոչ տարածաշրջանային տնօրենների համար 15 տոկոս է:

3. Ճշգրտման տոկոսը. Բոլոր ընտրաշրջաններում ձայների թիվը ճշգրտելու նպատակով այն դեպքում, երբ ստորեւ նշված 7-րդ պարբերության համաձայն քվեարկության հետագա փուլերի անհրաժեշտություն է առաջանում, Կառավարիչների խորհուրդը յուրաքանչյուր ընտրության համար սահմանում է ճշգրտման տոկոս՝ տարածաշրջանային տնօրենների համար, եւ ճշգրտման տոկոս՝ ոչ տարածաշրջանային տնօրենների համար: Յուրաքանչյուր ճշգրտման տոկոս պետք է լինի ավելի բարձր, քան համապատասխան նվազագույն սահմանաչափը:

ա) Տարածաշրջանային տնօրենների համար ճշգրտման տոկոսը սահմանվում է տարածաշրջանային կառավարիչների կողմից ընտրությանը քվեարկելու համար իրավունք տվող ձայների ընդհանուր թվի նկատմամբ տոկոսային չափով: Նախնական ճշգրտման տոկոսը տարածաշրջանային տնօրենների համար 15 տոկոս է:

բ) Ոչ տարածաշրջանային տնօրենների համար ճշգրտման տոկոսը սահմանվում է ոչ տարածաշրջանային կառավարիչների կողմից ընտրությանը քվեարկելու համար իրավունք տվող ձայների ընդհանուր թվի նկատմամբ տոկոսային չափով: Նախնական ճշգրտման տոկոսը ոչ տարածաշրջանային տնօրենների համար 60 տոկոս է:

4. Թեկնածուների թիվը. Յուրաքանչյուր ընտրության համար Կառավարիչների խորհուրդը սահմանում է այն տարածաշրջանային տնօրենների եւ ոչ տարածաշրջանային տնօրենների թիվը, որոնք պետք է ընտրվեն Տնօրենների խորհրդի չափի եւ կազմի մասին իր որոշման հիման վրա՝ 25-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն:

ա) Տարածաշրջանային տնօրենների նախնական թիվն ինն է:

բ) Ոչ տարածաշրջանային տնօրենների նախնական թիվը երեք է:

5. Թեկնածության առաջադրումը. Յուրաքանչյուր կառավարիչ կարող է առաջադրել միայն մեկ անձի թեկնածությունը: Տարածաշրջանային տնօրենի պաշտոնի թեկնածուներին առաջադրում են տարածաշրջանային կառավարիչները: Ոչ տարածաշրջանային տնօրենի պաշտոնի թեկնածուներին առաջադրում են ոչ տարածաշրջանային կառավարիչները:

6. Քվեարկությունը. Յուրաքանչյուր կառավարիչ կարող է քվեարկել մեկ թեկնածուի օգտին՝ նրան տալով բոլոր այն ձայները, որոնց իրավունքն ունի իրեն նշանակող անդամը՝ 28-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն: Տարածաշրջանային տնօրենների ընտրությունն իրականացվում է տարածաշրջանային կառավարիչների քվեարկությամբ: Ոչ տարածաշրջանային տնօրենների ընտրությունն իրականացվում է ոչ տարածաշրջանային կառավարիչների քվեարկությամբ:

7. Քվեարկության առաջին փուլը. Քվեարկության առաջին փուլում որպես տնօրեն ընտրվում են առավելագույն ձայներ ստացած թեկնածուները՝ տնօրենների այն թվով, որոնք պետք է ընտրվեն՝ պայմանով, որ ընտրվելու համար թեկնածուն ստացել է կիրառելի տոկոսային սահմանաչափը հաղթահարելու համար ձայների բավարար թիվ:

ա) Եթե քվեարկության առաջին փուլում չի ընտրվում այնքան տնօրեն, որքան պահանջվում է, իսկ թեկնածուների թիվը համապատասխանում է այն տնօրենների թվին, որոնք պետք է ընտրվեն, ապա Կառավարիչների խորհուրդը, իրավիճակից ելնելով, հետագա գործողություններ է ձեռնարկում՝ տարածաշրջանային տնօրենների ընտրությունները կամ ոչ տարածաշրջանային տնօրենների ընտրություններն ավարտին հասցնելու համար:

8. Քվեարկության հետագա փուլերը. Եթե քվեարկության առաջին փուլում չի ընտրվում այնքան տնօրեն, որքան պահանջվում է, իսկ թեկնածուների թիվը

գերազանցում է այն տնօրենների թիվը, որոնք պետք է ընտրվեն քվեարկության ժամանակ, ապա անհրաժեշտության դեպքում քվեարկությունն անցկացվում է հետագա փուլերով: Քվեարկության հետագա փուլերի համար՝

- ա) Նախորդ քվեարկության ժամանակ նվազագույն ձայներ ստացած թեկնածուն հաջորդ քվեարկության ժամանակ չի առաջադրվում:
- բ) Ձայնի իրավունք ունեն միայն՝ i) այն կառավարիչները, որոնք նախորդ քվեարկության ժամանակ քվեարկել են այն թեկնածուի օգտին, որը չի ընտրվել, եւ ii) այն կառավարիչները, որոնց՝ ընտրված թեկնածուին տրված ձայների շնորհիվ, համարվում է, որ վերջինիս օգտին տրված ձայները գերազանցել են ճշգրտման տոկոսը՝ ստորեւ ներկայացված «գ» կետի համաձայն:
- գ) Յուրաքանչյուր թեկնածուի օգտին քվեարկող բոլոր կառավարիչների ձայներն ավելացվում են թվերի նվազման կարգով, քանի դեռ այն չի գերազանցում ճշգրտման տոկոսը ներկայացնող ձայների թիվը: Այն կառավարիչները, որոնց ձայներն այդ հաշվարկի ժամանակ ներառվել են, այդ թվում՝ այն կառավարիչները, որոնց քվեարկությամբ ճշգրտման տոկոսը գերազանցվել է, համարվում է, որ տվել են իրենց բոլոր ձայներն այդ տնօրենի օգտին: Համարվում է, որ մնացած կառավարիչների, որոնց ձայներն այդ հաշվարկի ժամանակ չեն ներառվել, քվեարկությամբ թեկնածուի ձայների ընդհանուր թիվը գերազանցել է ճշգրտման տոկոսը, եւ այդ կառավարիչների ձայները չեն հաշվարկվի այդ թեկնածուի ընտրության օգտին: Այդ մնացած կառավարիչները կարող են քվեարկել հաջորդ քվեարկության ժամանակ:
- դ) Եթե քվեարկության հետագա փուլերից որեւէ մեկի ժամանակ մնում է միայն մեկ տնօրեն, որը պետք է ընտրվի, ապա տնօրենը կարող է ընտրվել մնացած ձայների պարզ մեծամասնությամբ: Բոլոր այդ մնացած ձայները հաշվվում են վերջին տնօրենի ընտրության օգտին:

9. Ձայների փոխանցումը. Ցանկացած կառավարիչ, որը չի մասնակցում քվեարկությանը, կամ որի ձայները չեն օժանդակում որեւէ տնօրենի ընտրությանը, կարող է իրեն պատկանող ձայները փոխանցել որեւէ ընտրված տնօրենի՝ պայմանով, որ այդ կառավարիչը նախապես ստացել է բոլոր այն կառավարիչների համաձայնությունը, որոնք այդ նշանակման համար ընտրել են այդ տնօրենին:

10. Հիմնադիր անդամի արտոնությունները. Կառավարիչների կողմից տնօրենների թեկնածության առաջադրումն ու նրանց օգտին քվեարկությունը, ինչպես նաեւ տնօրենների տեղակալների նշանակումը կատարվում է՝ հաշվի առնելով այն սկզբունքը, որ յուրաքանչյուր հիմնադիր անդամ ունի իր ընտրաշրջանում մշտական կամ ռոտացիոն կարգով տնօրեն կամ տնօրենի տեղակալ նշանակելու արտոնություն:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2015 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

